

# ԼՈՅՍ

ՓԵՅ ԻճՕՁՅ ԸԿԻ  
 »Օ  
 ՌՅ ԵՅ ՌՅ ԻՅ ԻՅ Կ  
 »ՌՅՅ ՄՅ ԱՅ ԱՅՌՅ

Չ ռի սԿՅ ի շՌ »Օ · ԻԵՅ ՕճՌ  
 ԵՍՄՅ · ՇՌ

¾1. ԿՅ ՕՅՅ ԵՅ ՌՅՅ Կ

ՕճԵՐՅ Յ ՌՅՕ ՌՅՅ ՍՅ Ռ  
 1 5 1 7 5 - 1 1 7  
 ԱՅՌՅՅ Կ - ԱՅՌՅՅ Կ

ՃՅԵՅ ԵՍԵ 6 4 9 5 1 8 0

E-mail : louys@dpir.com

Համար 6  
 15 Յուլիսի , 2000թ.

Գինը՝ 3000 ռիալ

# LOUYS

Armenian Cultural  
 and Social Biweekly

No. 6 , 15 June, 2000

License Holder and  
 Editor-in-Chief  
 Ed. Baghdasarian

POBox 15175-117  
 Tehran - Iran  
 Tel. (0098 - 21) 6495180

## ՝ճԻՅ ԿՅՅ ԻճՕՁՅՕԿ

Խմբագրական.....	2
Լուրեր.....	3-6
Թեմական.....	7-8
Ազատ Ամբիոն.....	9-10
Հայաստանի Խորհրդարանը .....	11-12
Թատրոն.....	13
Նոր Ջուղայի Թանգարանը.....	14
Լինդա Աւանդետան.....	15
Գրական էջ.....	16-17
Առողջապահական .....	18
Մարզական .....	19-20
Ժամանց .....	21
Երիտասարդի համար.....	22

## ձՅ ռԵՐՅՅՅՅՅ ԿՅՅ ԱՅԿ

Խմբագրական	1
Ամփոփ լուրեր	2-7
Հուշանգ Գուշիրիի յիշատակին	7
Մի երկխօսութեան սկիզբը	8
Գիքոր	9-10

## فهرست بخش فارسی

1	سرمقاله
۲-۷	مرور اخبار
۷	برای هوشنگ گلشیری
۸	شروع یک گفتگو
۹-۱۰	ادبیات - گیگور

## Ճապիկի առաջին էջում՝

Նոր Ջուղայի Ս.  
 Ներսես եկեղեցի  
 Հիմն. 1666 թ.

طرح روی جلد:

کلیسای نرسس مقدس  
 جلفای اصفهان (۱۰۴۵ ه.ش.)

## ՉԸ ՌՅՅ ՍՅ ՌՇ ՍՅՅՅՅ ԵՒՅ ԻՅՕՅՅՅՅՅՅՅ

Թամար Փանոսեան, Աննա Սարգսեան,  
 Ռուբիկ Սարգսարեան, Լևոն Ահարոնեան,  
 Ռոբերտ Վարդուհեան, Վաչիկ Վարդանեան,  
 Անդրանիկ Խէչումեան, Կարո Սարգսեան, Ժորժ  
 Ահարոնեան, Րոյ Ղազարեան, Անուշ Մելիքեան,  
 Անի Նազարեան, Ֆարշիդ Արփիհնէ Սինանեան  
 Էդ. Գերմանիկ, Ռաֆֆի Ուրուջեան, Թեմի Իսաղուլեան,  
 Վազգէն Սինասեան, Ռազմիկ Վելիջանեան, Անդրանիկ  
 Չաքարեան, Սուսաննա Համբարձումեան, Սուրէն Խէչումեան  
 Լեւոն Սինասեան, Համո Յարութիւնեան, Հայկ Գալստեան

ՍàðÀÛî Æð Ê àðÐð, ððÛà  
Սàð ð Î ÛÎ ð ÈÆø Û°ð

Օրերս Իրանի 6-րդ նստաշրջանի խորհրդարանը՝ ստանձնելով իր առաքելությունը, սկսեց իր աշխատանքները: Ինչպես գիտենք այս խորհրդարանի ընտրված պատգամաւորների մեծամասնությունը կազմում են բարեփոխական թեմին պատկանող անձինք: Այս հանգամանքը նոր յոյսեր է սպասումներ է արթնացրել ժողովրդական լայն զանգածների մէջ: Խորհրդարանից բազում ակնկալիքներ ունեն մատն երկրում եղած բազմաթիւ քաղաքական եւ հասարակական ուժեր, որոնք իրենց կողմից մշակված բարենորոգումների ծրագրերով՝ պատգամաւորական խմբակցությունների միջոցով, հանդէս կը գան նորընտիր խորհրդարանում եւ կը պահանջեն դրանց քըն-



նարկումը:

Իրանահայ համայնքը եւս ունի դեռ անցեալից կուտակված ազգային եւ հասարակական հիմնա-

**Իսկ ինչ վերաբերում է մեր հայ պատգամաւորներին, ապա վստահ ենք, որ նրանք ունեն քաղաքական լուրջ հասունացում, եւ իրենց ծրագրերը խորհրդարանում ներկայացնելով՝ հաշի կառնեն ողջ համայնքի շահերը:**

խընդիրներ, որոնց լուծման համար մեծ յոյսեր են կապում նորընտիր խորհրդարանի հետ:

Յոյս ունենք, որ նորընտիր խորհրդարանի գործունեութեամբ կը ստեղծեն համապատասխան նախադրեալներ՝ օրէնսդիր եւ գործադիր մարմին-

ների միջեւ բարենպաստ համագործակցութիւն սկսելու եւ միասնաբար յաղթահարելու երկրում առաջացած բազմաթիւ դժարութիւնները: Ըստ բարեփոխականների ծրագրի, որոնք, ինչպէս արդէն նշեցինք, մեծամասնութիւն են կազմում խորհրդարանում, երկրում պէտք է կիրառեն ժողովրդավարական բոլոր սկզբունքները, այդ թւում մատն յարգեն քաղաքական եւ կրօնական փոքրամասնութիւնների իրաւունքները:

Հարկ է նշել մատն այն փաստը, որ խորհրդարանում նկատուել է որոշ հանդուրժողականութիւն, դրա ամենացայտուն օրինակն է հանդիսանում խորհրդարանի նախագահական խորհրդի ընտրութիւնը: Սա արդէն առաջընթաց քայլի դրսեւորում էր: Հաւատանք մատն, խորհրդարանում մեծամասնութիւն կազմող, բարեփոխականների այն խոստումներին, որ իրենց խորհրդարանական գործունեութիւնը կը բխի քափան ցիկութեան սկզբունքից եւ Սահմանադրական օրէնքներից:

Իսկ ինչ վերաբերում է մեր հայ պատգամաւորներին,

**Իրանահայ համայնքը եւս ունի դեռ անցեալից կուտակված ազգային եւ հասարակական հիմնախնդիրներ, որոնց լուծման համար մեծ յոյսեր են կապում նորընտիր խորհրդարանի հետ:**

ապա վստահ ենք, որ նրանք ունեն քաղաքական լուրջ հասունացում ,եւ իրենց ծրագրերը խորհրդարանում ներկայացնելով՝ հաշի կառնեն ողջ համայնքի շահերը: ■

Է՞՛ն՝ Կ՛՛ն՝ Ն՛՛ն՝ ՍՒՑ՛՛ Ս՛՛ն՝ Ս՛՛ն

### Տ. Սեպուհ Եպիս. Սարգսեանը՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ



Թեհրանի Հայոց Թեմի 11-րդ պատգամատրական ժողովը իր յունիսի 6-ի նիստում Տ. Սեպուհ եպ. Սարգսեանին ընտրեց Թ. Հ. Թեմի առաջնորդ:

«Լոյս» երկշաբաթաթերթը այդ կապակցութեամբ ջերմօրէն շնորհակալորում է յարգելի առաջնորդին և յաջողութիւն ցանկանում նրան, Թեհրանահայ համայնքը այս տազ-նապալի պայմաններից դուրս բերելու գործում:

### Քրիստոնէութեան 1700 ամեակը «Վան-Վասպուրական պատ.



հարցերի կենտրոնում».- 2000 թ.ի մայիսի 31-ին, Քրիստոնէութեան 1700 ամեակին նկրած մի ձեռնարկ տեղի ունեցաւ «Վան-Վասպուրական պատմական հարցերի կենտրոնի» հաւաքատեղիում: Բացման խօսքով հանդէս եկաւ պրն. Լեւիկ Աւետեանը, օրայ դասախօսն էր Տէր Սեպուհ քահանայ Ռաֆէտեանը, որի թեման էր՝ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակումը, ըստ տարբեր առասպելների և պատմական տեղայնների:

Չեռնարկը եզրափակեց Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սեպուհ եպիս. Սարգսեանը:  
*Թղթակից Արսիհն Սինանեան*


### Հայաստանի գեղանկարիչների ցուցահանդէս.- Հայաստանից ժամանած նկարիչների խումբը բաղ-



կացած է չորս գեղանկարիչներից՝ Այսէր Մատթէոսեան, Ռոբերտ Այւազեան, Մարտին Տօնոյեան և Արարատ Խանգաղեան (Մերօ Խանգաղեանի որդին): Նրանք ներկայացրել են 80 աշխատանքներ՝ տարբեր թեմաներով:


Ցուցահանդէսը տևեց 6 օր՝ մայիսի 27-ից մինչև յունիսի 1-ը, Թեհրանի Ազադի համալիրում, նոյն ըստեղծագործութիւնները յունիսի 5,6 և 7-ին ցուցադրելու են Հայ Հասարակական (Հայոց Ակումբ) միութեան կենտրոնատեղիում:

*Թղթակից Անի Նազարեանց*



Իրանահայ համայնքը իր յարգանքի տուրքը մատուցեց Իման Խոմէյնիին.- Իրանի Իսլամական յեղափոխութեան առաջնորդ՝ Իման Խոմէյնու մահան տարելիցի առթիւ, ինչպէս միշտ, այս տարի եւս իրանահայ համայնքը՝ Ազգային Առաջնորդարանի ներկայացուցիչների գլխատրու-թեամբ, այցելեց Իմանի դամբարան եւ իր յարգանքի տուրքը մատուցեց մեծ առաջնորդին: Այս այցելութեանը մասնակցում էին նաեւ նորընտիր խորհրդարանի հայ պատգամատրները, Թեմական Խորհրդի եւ միւս ազգային մարմինների ներկայացուցիչները:

Մայիսի 28-ը տօնեց «Արարատ» մարզաաճում.- Մոյն թականի մայիսի 26-ին Թեհրանի «Ա-րարատ» մարզաաճում տօն-ւեց Հայաստանի առաջին հանրապետութեան Անկա-խութեան տօնը՝ մայիսի 28-ը: Բացման խօսքից յետոյ ելոյթ ունեցաւ օրայ բանախօս՝ Ի.Բ. խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան նորընտիր պատգամատր ղոկտ. Լ. Գաթեանը: Նա իր խօսքում նշեց, որ հայ ժողովուրդը 1918 թականին 600 տարուց յետոյ հասաւ իր գերնպատակին կերտեց իր առաջին Անկախ Հանրապետութիւնը: Այնուհետեւ թարկեց այն խոչընդոտները, որոնք այդ ժամանակաշրջանում ծառայել էին հայ ժողովրդի եւ նրա անկախ պետականութեան առջեւ: Վերջում նա ասաց, որ ժողովուրդը ունենալով իր



անցեալի փորձը, թոյլ չպետք է տայ կրկին անգամ ձեռք բերած անկայտութիւնը նոյն ճակատագրի արժանանայ:

Ծրագրի ընթացքում ե-լոյթ ունեցան թեհրանահայ միութիւնների երգչախմբերը եւ անհատ աս-մունքողներ:

Ելոյթ ունեցաւ նաեւ Իրանում Հ.Հ. լիազօր դեսպան՝ պրն. Գեղամ Կարիբջանեանը:

Հանդէսը եզրափակեց Թեհրանի Թեմի Առաջնորդական փոխանորդ Տէր Սեպուհ Եպիս. Սարգսեանը:

Այս ծրագիրը նոյնութեամբ կըրկընեց տոյն թականի մայիսի 28-ին «Միփան» միութեան «Նայիրի» սրահում:

*Թղթակից՝ Անի Նազարեանը*

**Բ**աՖՖի Մ.Մ. համալիրը ընտարեց իր նոր վարչութիւնը. 2000 թականի Յունիսի 5-ին



տեղի ունեցաւ ԲաՖՖի մարզա-մշակութային համալիրի ընդհանուր ժողովը՝ նոր վարչութիւն ընտրելու նպատակով: Ժողովին մասնակցում էին աւելի քան 100 միութեանականներ բացման խօսքից յետոյ, Բ.Մ.Մ.Հ նախագահ՝ պրն. Պետրոս Աբգարեանը նախ բացատրութիւններ տեց միութեան վարչութեան անդամների պարտականութիւնների մասին: Այնուհետեւ զեկուցեց նախկին վարչութեան կողմից տարած աշխատանքների կապակցութեամբ: Վարչութեան նախագահի խօսքից յետոյ եղան քննարկումներ և առաջարկներ: Ընդհանուր ժողովին ներկայ էին պետական ներկայացուցիչներ, որոնք իրենց ելոյթում նշեցին, թէ անցեալում տեղեակ են եղել ԲաՖՖի համալիրի բոլոր աշխատանքներին՝ նրան համարելով առաջատար և օրինակելի մարզամշակութային համալիր: Ըստ նրանց, այս համալիրը իրականացրել է բովանդակայից և բարձր զնահատականի արժանի աշխատանքներ:

Ժողովը եզրափակեց նոր վարչութեան ընտրութիւններով:

Նորընտիր վարչութեան կազմը հետևեալն է.

1. Պետրոս Աբգարեան
2. Ժիրայր Մովսիսեան
3. Աբրահամ Խոսրովեան
4. Անդրանիկ Փուլադեան
5. ԺողեՖ Քէշիշեան
6. Տիկ. Արկիկ Ամրանեան
7. Մարտիկ Հախնազարեան

Անձնափոխանորդներ ընտրեցին՝ տիկ. Ժարմէն Սկրտչեանը և տիկ. Մարիա Դիասին:

*Թղթակից՝ ԲաՖՖի Ուրուջեան*

### ԷճՕՆ

**Թ**ուրքիան ազրեսի վերաբերմունք է ցուցաբերում իրանացիների նկատմամբ (Բայան օրաթերթ 23.05.2000).- Թուրքիայի անվտանգութեան եւ ոստիկանական ուժերը՝ Ստամբուլ քաղաքում, սկսել են խուզարկել իրանացիների բնակարանները, ձեռքակալել են 300 իրանացիներ:

Առ ի տեղեկութիւն. Թուրքիայում ապրում են աւելի քան 50 հազար իրանացիներ:

**Ի**րանի մշակութային նախարար՝ Մեհաջերանի. «Մեր նախանձաքնդորութիւնը պետք է լինի այն, որ ունենանք առաջընթաց զարգացում»:

(Բայան օրաթերթ 18.05.2000) .- Իրանի «Էրշադ» (Մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարու-




թիւն) նախարարը յայտնել է, որ մեր հիմնախնդիրը երկրի առաջադիմութիւնն է, իսկ խմբակային եւ քաղաքական վեճերը պետք է մղեն երկրորդ պլան:

**Ա**դրբեջանական մամուլի գլխաւոր խմբագիրները Իրան են ժամանել (Իրան օրաթերթ 24.05.2000).- Նրանց կազմում են գտնուում ադրբեջանական «Ենի Մուսաւաթ», «Ենի Ադրբեջան», «Ազատլիդ», «Տ25», լրագրողների արհմի-

ութեան նախագահը եւ «Թուրան» լրատուական գործակալութեան նախագահը: Կողմերի հանդիպման ընթացքում ձեռք են բերել որոշ համագործակցութեան եզրեր: Նրանք նշել են, որ երկու երկրների յարաբերութիւններում մասնուր խոշոր դեր է կարող խաղալ:

**Ի**րանի Իսլամական Հանրապետութեան նախագահ՝ Խաթամի.-

«Մենք դէմ ենք առումային զենքի օգտագործմանը» (Բայան օրաթերթ 18.05.2000).- Իրանի նախագահը այս խօսքերը արտայայտել է ա-



տումային էներգետիկայի միջազգային ընկերութեան առաջին քարտուղար՝ Մոհամմադ Ալբարայիի հետ հանդիպման ընթացքում: «Աշխարհը մաքրել մարդկութեանը ոչնչացնող զենքերից՝ այսօրայ մարդու պահանջըն է»,- ասաց պրն. նախագահ՝ Խաթամին:

**Հ**երկուլեսի արձանը ցուցադրում է Իրանում (Բայան օրաթերթ 17.05.2000).- Յունաստանի աստուածներից մէկի՝ Հերկուլեսի արձանը Իրանի Քերմանշահ քաղաքի «Մուսուս օլ մօլթ» շրջանում հանրային ցուցադրման է ներկայացել: Հերկուլեսի արձանը՝ իր ողջ հասակով մէկ, 252 սմ երկարութեամբ, կերտել էր մ.թ.ա. 153 (Միհրդատ թագաւորի օրօք) : Այս արձանը յայտնաբերել է 1958 թ.-ին Բեհիսթունեան արձանագրութիւնների գտնած վայրից 100 մ հեռավորութեամբ՝ ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում:

### ԾՅ ԵՅ ԵՅ ԵՅ

**Չ**բօսաշրջիկութիւնը առաջընթաց է ապրում Հայաստանում (Ազգ. Հեռու. 22.5.2000).- Չբօսաշրջիկութեան համար մեծ նշանակութիւն ունի այսօր բազմաբնոյթ համակարգի կառավարումը, որը սկսում է



հնագիտությունից մինչև սպասարկման համակարգ:

Սփիտքահայ գործարար Վահագրն Հովհաննեսը հիմնել է այս ոլորտին վերաբերող համապատասխան հիմնադրամ: Ուշադրության կենտրոնում են պատմամշակութային յուշարձանները: Անցեալ տարի 27 հազար զբոսաշրջիկ է այցելել Հայաստան, այս տարի սպասում են մօտ 100 հազար զբոսաշրջիկներ, յուսանք որ զբոսաշրջիկների թիվը հասնի մեկ միլիոնի: Նշենք նաև Հայաստանի տնտեսության զարգացումը մեծմասամբ կախած է զբոսաշրջիկության ծախսից:

**Կոմկուսը այլևս չի պահանջում Ռ.Քոչարեանի հրաժարականը (Ազգ. Հեռու. 22.5.2000).**



Հայ Կոմկուսի անդամ Գագիկ Թադևոսեանը ասել է, որ իրադարձությունների ընթացքը դասաորեն այնպես, որ նախագահի հրաժարականի պահանջ կարիքը այլևս չի զգացում, եւ Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեյի բիւրօն դադարեցնում է հանրահասարակության կազմակերպումը:

**Հայաստանի «Ռուսաստան-Բելառուս-Հայաստան» միության խորհրդարանական նախաձեռնող խումբը մշտական դիտորդի կարգավիճակ է ստանձնել (Ազգ. Հեռու. 23.5.2000).** Կոմկուսի անդամ Հրանտ Ոսկանեանի խօսքերով, դա նշանակում է, որ այսուհետև «Ռուսաստան-Բելառուս» նուաշրջաններին իրենք կը մասնակցեն ոչ թէ անկոչ հիւրի, այլ՝ հրախիբեալ կարգավիճակով եւ հնարաւորութիւն կունենան մանրամասն ծանօթանալ դաշինքի ծրագրերին:

**Հայրենի հողին յանձնեց զօրավար Դրօի (Դրաստամատ Կանանեան) աճիւնը (Նոյան-Տապան**



28.5.2000).- Մայիսի 28-ին Բաշ-Ապարանի ճակատամարտի յուշակոթողի մօտ վերայտղարկարուեց հայրենիքի մեծ նւիրեալ զօրավար Դրաստամատ Կանանեանի աճիւնը: Այդ արարողութեանը մասնակցում էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, ՀՀ ԱԾ նախագահ Արմէն Խաչատրեանը, վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, զինուորականներ, պետական ու քաղաքական գործիչներ, անամի մտաւորականներ եւ Դրօի հարազատները:

**Ռուսաստանը դէմ է ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի անմիջական մասնակցութեանը համակրական անվրտանգութեան համակարգին.** «Ամերիկեան ռազմական ներկայութիւնն վտանգատր է այս տարածաշրջանի համար», - յայտարարել է Լ. Իւաշովը: Ըստ նրա, անվտանգութեան համակրական համակարգի ձեւաւորման զաղափարը շահագրգռութիւն է առաջացնում Հայաստանի, Արեւելքանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի համար, սակայն բոլորից քիչ շուշափում է ամերիկացիների շահերը: Մենք ձեռնարկում ենք բոլոր անհրաժեշտ միջոցները մեր եւ մեր դաշնակիցների անվտանգութեան համար, ընդգծել է Լ. Իւաշովը:

**Մորմունքը Հայաստան էլ քափանցեցին (Առաւօտ օրաթերք 17.5.2000).** Նրանք հաւատում են, որ Յիսուս Քրիստոսը Աստուծոյ որդին է, սակայն հաւատում են նաև մարգարէ ՁոզէՖ Սմիթին, որի միջոցով, ըստ նրանց, Քրիստոսը վերականգնել է իր եկեղեցին, ուսմունքը եւ իշխանութիւնը: Հաւատում են

նաև Մորմոնի գրքին, որի անունով էլ իրենց կոչում են մորմոններ: Ըստ մորմոնների Հայաստանում նրանք 650 անդամ ունեն, հիմնականում տարեց, բայց կան նաև երիտասարդներ ու երեխաներ: Նրանք Ֆինանսատրում են Միացեալ Նահանգների կողմից:

**Ռուսաստանի հիւպատոսարան Մեղրիում եւ Գիւմրիում (Երկիր օրաթերք 17.5.2000).** Տեղեկացեց, որ Գիւմրի եւ Մեղրի քաղաքներում ռուսաստանեան հիւպատոսական ծառայութիւնների ստեղծման վերաբերեալ կան կառավարական որոշումներ, եւ հարցը լուծում է ստացել բոլոր համապատասխան ատեաններում: Այդ մասին յայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնութեան հետ յարաբերութիւնների վարչութիւնից:

**Ռ.Քոչարեանը Հայաստանի միացման եւ «Ռուսաստան-Բելառուս» դաշինքի մասին խօսել է Բելառուսի նախագահի հետ (Ազգ. Հեռու. 25.5.2000).** Այս կապակցութեամբ ՀՀ նախագահ Ռ.Քոչարեանը ասաց, որ «Խօսել է այդ դաշինքի հետ կապած կէտերի վերաբերեալ ցանկութիւն կայ, այդ պայմանագիրը մանրամասն քննարկելու: Այդ պայմանագրի որոշ կէտերի վերաբերեալ պարզաբանումներ եւ շահագրգռածութիւն է առաջացել»:

**Հայաստանի տարածքը բանակցութիւնների առարկայ չի կարող լինել (Նեպոլիտի մայա գազետա**



**օրաթերք 29.5.2000).** Լաչինը Ադրբեյջանի հատուցումն էր պատերազմական պարտութեան համար: Հակամարտութեան կարգաւորման

գործում առաել ակտիւութիւն է ցուցաբերում Միացեալ Նահանգները, որը շրջանառութեան մէջ է դրել տարածքների փոփոխման թէգը: Դա կարող է ձեռնուտ լինել ԱՄՆ-ին, սակայն թուրքական աշխարհի գեր-հրգօրացումը կը հանգեցնի քա-ղաքակրթութեան համաշխարհային ճգնաժամի:

Ազգային Ժողովում եղած



կուսակցութիւնների պատգամատրների քանակը (Երկիր օրաթերթ 17.5.2000).- 2000 թականի մայիսի 16-ի դրութեանը Ազգային Ժողովում գործում են 6 խմբակցութիւն եւ 2 պատգամատրական խումբ: «Միասնութեան»-ից մասնակցում են 50 պատգամատրներ, ՀՅԴ-ից եւ ՀԿԿ-ից՝ 8, «Ժրատուք եւ Միասնաբանութիւն»-ից՝ 7-ը, «Օրինաց Երկիր»-ից եւ «Երկիր»-ից եւ «ԱԺՄ»-ից՝ 6 պատգամատրներ: «Կայունութիւն» պատգամատրական խմբակցութեանը անդամակցում են 20 պատգամատրներ, իսկ նորարարական «Հայաստան» պատգամատրական խմբակցութեանը՝ 12 անկախ պատգամատրներ:

Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցութիւնը Երոխտրիրդին (Հայոց Աշխարհ 18.5.2000).- Հայաստանն ու Ադրբեջանը կարող են մտնել միայն Երոպայի խոր-

հուրդ՝ «Երոխտրիրդի կոնենցիաները կատարելու, Լեռնային Գարարադի հակամարտութեան կարգաւորման, Երոխտրիրդի նորմերին համապատասխան ազգային օրենսդրութեան վերափոխման եւ մարդու իրաւունքները յարգելու պարտաւորութիւնները ստանձնելու դէպքում»: Ներկայումս երոխտրիրդի մէջ ընդգրկած են 41 պետութիւն:

Ինչ էր հետապնդում ԱՄՆ-ն ՀՀ խորիրդարանական յանձնարարների նախագահներին հրաւիրելով Ամերիկա (Հայկական Ժամանակ օրաթերթ 18.5.2000) .- Այդ պատգամատրները շատ բաների տեղեկացան Միացեալ Նահանգների մասին: Մասնատրապէս ԱՄՆ-ի պաշտօնեաները, ըստ ԱԺ-ի պատգամատր Վիկտոր Գալլաքեանի, ասել են, թէ Քոչարեանը անվստահութիւն է զգում ժողովրդի եւ ԱԺ-ի կողմից ու մտավախութիւն ունի, որ Գարարադի հարցի կարգաւորման իր առաջարկած տարրերակը ԱԺ հաւանութեանը չի արժանանայ: Ամերիկացիները խնդրել են, որ հայ խորիրդարանականները Գարարադի հարցի կարգաւորման գործում աջակցեն Քոչարեանին:

ՕԲԵ 1/4 ԱՄՆ

Թուրքերի կողմից անընդունելի է Մոսկւայի քաղաքակրթութիւնը (Իրան օրաթերթ 24.5.2000).- Թուրքիայի վարչապետի ազգայնամոլ առաջին քարտուղարը մեղադրում է Ռուսաստանին, որ իբրեւ թէ վերջինս աշխատում է իր վերահսկողութիւնը սահմանել նախկին Խորիրդային Միութեան, յատկապէս Միջին Ասիայի, Կովկասի հանրապետութիւններում:

Տնտեսական մասնատր աշխատանքը Չինաստանում (Իրան օրաթերթ 17.5.2000).- Չինաստանի նախագահ՝ Չիանգ Չեմինը երկրի կոմունիստական կուսակցութիւնից պահանջել է, որ իր ազդեցութիւնը ներդնի տնտեսական մասնատր աշխատանքներում: Նա նշել է նաեւ, որ վերջինս տնտեսական ամուր համակարգի եւ ոչ պետական տնտեսութեան առողջ զարգացումը, անհրաժեշտ է սոցիալիզմի առաջին փուլում:

ՆԱՏՕ-ի տարածումը Ռուսաստանի սահմանամերձ երկրներում (Իրան օրաթերթ 21.5.2000).- Կենտրոնական եւ Արեւելեան Երոպայի 9 երկրներ դիմել են ՆԱՏՕ-ին անդամակցելու համար: Այդ երկրներն են Լիտւան, Լատւիան, Էստոնիան, Բուլղարիան, Ռումինիան, Սլովենիան, Սլովակիան, Ալբանիան եւ Մակեդոնիան: Ռուսաստանը ըզգուշացրել է, որ չի հանդուրժի ՆԱՏՕ-ի տարածումը իր սահմանամերձ երկրներում եւ Էստոնիայի, Լատւիայի ու Լիտւայի միացումը ՆԱՏՕ-ին: Վաղիմիր Պուտինը հաստատել է որոշ ռազմական դուլտրիաններ, ընդ որում ռազմական պայմանագրերի ստորագրումը իր սահմանամերձ երկրներում սպառնալիք է համարել Ռուսաստանի ապահովութեան համար:

Ղալանի ատիճանական մահը (Իրան օրաթերթ 31.5.2000).- Աբդուլլահ Ուզալանի կողմնակիցները Թուրքիային դատապարտում են, Ուզալանին բանտում տանջամահ անելու գործում: Նրանք պահանջում են, որ նա բժշկական քննութեան ենթարկի, բժշկական միջազգային մի խմբի կողմից:

**«Լոյս» Երկշաբաթերթի  
Յարգարժան Խմբագրական Կազմ  
Յարգարժան Խմբագիր**

Սոյն գրութեանը կցւած՝ Չեզ ենք հղում Թեհրանի հայոց թեմի Կանոնադրութիւնը եւ առաջարկում ենք ժողովրդին ծանօթացնելու նպատակով, այն պարբերաբար տպագրելու Չեր թերթում:

Ի պահանջի հարկին՝ ընտրական յօդուածներում յառաջիկայ փոփոխութիւնները ժամանակին մեր ժողովրդի սեփականութիւնը կը դառնան:

Սեր համայնքի հայատառ մամուլից ակնկալւում է իրենց յատուկ ծրագիրն մշակել, քարոզչական լայն աշխատանք ծաւալելով ապահովելու համար մեր համայնքի առաւելագոյն մասնակցութիւնը սոյն ընտրութիւններում:

**ԹԵՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
12-րդ ՊԱՏՉԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ**

**ԱՏԵՆԱՊԵՏ՝  
Թ.ԹՈՎԱՄԱՍԵԱՆ**

**ԱՏԵՆԱԴՐԻՐ՝  
Ս.ՍԱՏԹԵՆՍԵԱՆ**

**22 Մայիս 2000**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Այսու յայտնում ենք Թեհրանի հայոց թեմի սիրելի ժողովրդին, որ Թ.Հ.Թ. 12-րդ Պատգամատրական Ժողովի Կենտր. Ընտրական Յանձնախումբը իր առաջին նիստը գումարեց սոյն քաղաքի մայիսի 21-ին, Ազգ. Առաջնորդարանում, նախագահութեամբ՝ Առաջնորդական Տեղապահ՝ Տէր Սեպուհ՝ Ս. Եպիսկոպոս Սարգսեանի: Սրբազան Հայրը իր ուղղութիւնները փոխանցեց Յանձնախմբի աշխատանքների վերաբերեալ:

Սոյն հանդիպման «Յանձնախումբը» զբաղեց յառաջիկայ աշխատանքների ծրագրերով, եւ ընտրեցին աշխատանքային ծրագրատրման յանձնախմբեր: 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների քաղաքի շուրջ եղան տեսակէտներ, եւ այդ ընտրութիւնների քաղաքը նշանակեց Հոկտ. 2000 թ. իսկ ճշգրիտ օրը կը յայտարարի որոշ ուսումնասիրութիւններից յետոյ: Նկատի ունենալով Թեհրանի թեմի 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների կարեւորութիւնը, որը երաշխատուած է մեր ժողովրդի մասնակցութեամբ, այսու կոչ ենք ուղղում մեր համայնքին, որ յանձնախումբը ակնկալւում է ունենալ ժողովրդի առաջարկներն ու տեսակէտները՝ սոյն ընտրութիւնների բարեյաջող կայացման համար, ուստի բոլոր նրանք, որ առաջարկութիւններ եւ տեսակէտներ ունեն ընտրութիւնների կապակցութեամբ, խնդրում ենք գրատր ներկայացնեն Ազգային Առաջնորդարանի գրասենեակին մեզ փոխանցելու համար:

**ԹԵՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
12-րդ ՊԱՏՉԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ**

**Î² ÛàÛ² , ðàòÂÆòÛª Â °Ðð² ÛÆ Ð² Ûàò Â °ØÆ**

**ՆԱԽԱԲԱՆ**

Ա. Իրանի հիմնական եւ քաղաքացիական օրէնքների համաձայն, Իրանահայութիւնը ենթակայ լինելով երկրի օրէնքների եւ ճանաչելով որպէս կրօնական փոքրամասնութիւն ունի կրօնի, դաւանանքի, պաշտամունքի ու ծէսի ազատութիւն, ինչպէս նաեւ կրօնի, լեզուի եւ ազգային մշա-

կոյթի դասաւանդութեան եւ խորհրդարանում իր առանձին ներկայացուցիչներն ունենալու իրաւունք: Իսկ անձնական խնդիրներում ենթակայ է իր կրօնի ու դաւանանքի օրէնքներին ու աներկբայելի սովորութիւններին որոնց հիման վրայ վարում է իր Եկեղեցական, կրօնական ու կրթական գործերը, համապատասխան ժողովների եւ մարմինների միջոցով:

Բ.Թեհրանի Հայոց Թեմի Հայատանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ իր համայնքը, իրենց կրօնական գործերը վարում են համաձայն Հայաստանեաց Առաքելական Սուրբ եկեղեցու կանոնների, սովորութիւնների ու ասանդութիւնների եւ ենթարկւում են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր բարձր իշխանութեան:

Գ. Թեհրանի Հայոց Թեմի մաս են կազմում հետևեալ շրջանների Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող հայ համայնքներն ու նաեւ այն նորակազմ համայնքները, որոնք Թեմական Խորհրդի առաջարկով ու պատգամատրական ժողովի հաստատումով մաս կը կազմեն Թեհրանի Հայոց Թեմին եւ ներառած կը համարեն սոյն կանոնադրութեան մէջ:

- ա- Թեհրան
- բ- Ղազին
- գ- Ռաշտ
- Շ- Էնգելի
- զ- Մարի
- է- Գորգան
- ը- Մաշխադ
- թ- Համադան
- ժ- Արաք
- ի- Քերմանշահ

Դ. Թեհրան քաղաքը բաժանում է հետևեալ թաղերի.-

- Մասուն (Զարթէշ, Վահիդիէ եւ Նարմաք)
- Մաջիդիէ
- Հեշմաթիէ
- Ս.Մարգիս Եկեղեցու թաղ
- Ս. Աստածածին Եկեղեցու թաղ
- Թաղերի թիւը ըստ հայ ազգաբնակչութեան տեղաշարժի, Թեմական Խորհրդի առաջարկութեամբ եւ պատգամատրական ժողովի վարարացումով, կարելի է փոփոխութեան ենթարկել:

Այսու, հաստատում է սոյն կանոնադրութիւնը, որի մէջ նախատեսւած օրէնքների ու կանոնների համաձայն պիտի տարւեն Թեհրանի Հայոց Թեմի ազգային, հասարակական, եկեղեցական, վարչական, կրթական եւ տնտեսական գործերը:

**ՇԻՄԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒՆԵՆԵՐ ԵՒ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

**ՅՕԴԻԱԾ 1**

Թեհրանի Հայոց Թեմին պատկանող Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու բոլոր զուակները, առանց սեռի խտրութեան, վայելում են նոյն Եկեղեցու կանոններից եւ աներկբայելի ասանդութիւններից բխած, ինչպէս նաեւ սոյն կանոնագրութեամբ նախատեսւած բոլոր իրաւունքները, միաժամանակ ենթակայ լինելով Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կա-

նոններին, ասանդութիւններին, ինչպէս նաեւ ներկայ կանոնադրութեան թելադրանքներին, եւ նրանց հիման վրայ կեանքի կոչւած իրաւասու ժողովների եւ մարմինների որոշումներին:

**ՅՕԴԻԱԾ 2**

Թեհրանի Հայոց Թեմի օրէնսդիր ժողովն ու գերագոյն իշխանութիւնը Թեմի Պատգամատրական ժողովն է, որի անդամներն ընտրուում են ժողովրդի ուղղակի քէներով եւ որի հաստատած կանոնադրութեան եւ կայացած որոշումների համաձայն ղեկավարում են Թեմի ազգային, հասարակական, կրօնական, կրթական, տնտեսական ու վարչական գործերը:

**ՅՕԴԻԱԾ 3**

Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդանիստն է Թեհրան քաղաքը: Պատգամատրական ժողովի, Թեմական Խորհրդի եւ նրանից բխած մարմինների կենտրոնն է Ազգային Առաջնորդարանը, իսկ միւս բոլոր ազգային մարմիններն ու թաղային ժողովները իրենց միատեքը գումարում են պատկան թաղի ազգային հաստատութեանց մէջ:

**ՅՕԴԻԱԾ 4**

Թեհրանի Հայոց Թեմի սահմաններում գտնուող Եկեղեցիները, դպրոցական շէնքերը, կտակի կամ նիւրատութեան միջոցով համայնքի սեփականութիւնը կազմող շարժական կամ անշարժ գոյքերն ու կալւածքները, համայնապատկան գերեզմանատները եւ ազգապատկան այլ հիմնարկները, իրենց շարժական եւ անշարժ բոլոր գոյքերով եւ կայքերով, կազմում են Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու անքակտելի սեփականութիւնը:

Վերոյիշեալ սեփականութեանց կառավարման եւ օգտագործման իրաւունքը պատկանում է Թեմական Խորհրդին, յանձին պետական հաստատութեան մօտ պաշտօնապէս արձանագրուած «Շորայէ ԽալիՖեզարիէ Արամանէյէ Իրան»-ի անւամբ: (Իրանահայութեան Առաջնորդարանի Խորհուրդ)

**ՅՕԴԻԱԾ 5**

Թեհրանի Հայոց Թեմի բոլոր ժողովներն ու մարմինները, ի բացառեալ սոյն կանոնադրութեամբ նախա-

տեսւած այն մարմինների որոնք նշանակուում են Թեմական Խորհրդի կամ այլ իրաւասու մարմինների կողմից, Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ոգու եւ սովորութիւնների համաձայն, կեանքի են կոչուում ընտրական սկզբունքներով:

**ՅՕԴԻԱԾ 6**

ա- Ընտրելու իրաւունք ունեն, առանց սեռի խտրութեան, 18 տարին լրացրած այն բոլոր ազգայինները, որոնք տւեալ ընտրութեան քւէարկութեան թականից առնուազն վեց ամիս առաջ ապրել են իրենց ընտրական շրջանում:

բ- Ընտրելու իրաւունք ունեն, առանց սեռի խտրութեան, 25 տարին լրացրած այն բոլոր ազգայինները, որոնք տւեալ ընտրութեան քւէարկութեան թականից առնուազն վեց ամիս առաջ ապրել են իրենց ընտրական շրջանում:

**ՅՕԴԻԱԾ 7**

Ընտրելու իրաւունքից զրկուում են այն ազգայինները, որոնք.-

ա- Պետական օրէնքով քրէական յանցանքի համար զրկուած են քաղաքացիական իրաւունքներից, մինչեւ պատժարկումի շրջանի լրանալը կամ իրենց իրաւունքների վերականգնումը:

բ- Լրիւ կերպով չեն վճարել իրենց ծխական տուրքը,բացի այն անհատները, որոնք Եկեղեցական պատկան մարմինների որոշումով, ազատ են կացուցել կամ ազատ կը կացուցեն տուրք վճարելուց:

**ՅՕԴԻԱԾ 8**

ա- Ոչ ոք չի կարող միաժամանակ անդամակցել երկու մարմինների կամ ժողովների, ի բաց առեալ այն դէպքում, երբ այս կանոնադրութեամբ հակառակն է նախատեսուած:

բ- Թեմական Խորհրդի անդամ ընտրելիս, եթէ ենթական անդամ է Պատգամատրական ժողովի, ինքնաբերաբար դադարում է այդ ժողովի անդամ լինելուց եւ նրա փոխարէն Պատգամատրական ժողովի անդամակցում է տւեալ ընտրաշրջանի անձնափոխանորդը:



# ՄԻ ԱԿՆԱՐԿ ԻՐԱՆԱՐԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ



Լեւոն Ահարոնեան

«Ազատ Ամբիոն»-ում հրատարակվող յօդածները արտացոլում են յօդածագրի տեսակետները, և հաւանական է դրանք չհամընդհան «Լոյս»-ի հասարակական գաղափարներին: Այսու, նաև կոչ ենք անում սիրելի ընթերցողին, մասնակցելու այս էջում տպագրող միջոցի կապակցութեանը, իր թեր կամ դեմ կարծիքներով:

**«Լոյս»-ի Խմբագրութիւն**

Իրանում հանդէս եկած քաղաքական կուսակցութիւնները, որոնք դերակատար են եղել իրանահայ գաղութում, մեծաքանակ չեն: 20-րդ դարի սկզբում «Հնչակեան Մոց.-դեմոկրատական» կուսակցութիւնն էր, որը անդրանիկն էր այստեղ, այն միջազգային սոցիալիզմ էր քարոզում Իրանում, եւ նրա կենտրոնն էր հանդիսանում Թարիզը: Նրանք յարաբերութեան մէջ էին Բաքուի հայերի, քուրդերի եւ ռուս մտաւորականների հետ եւ որեւէ խոր ազդեցութիւն չեն թողել իրանահայ գաղութի ներքին կեանքի վրայ:

Երկրորդը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է՝ իր ազգային սոցիալիստական գաղափարախօսութեամբ: Նրանք 1906 թականին Իրանում մասնակցել են Սահմանադրական պայքարին, յատկապէս, Եփրեմ Խանը իր ջոկատներով մեծ դեր է խաղացել այդ պայքարի յաղթանակի ձեռք բերման գործում, որի սպանելուց յետոյ միայն, ՀՅԴ-ը իր լայնածառալ աշխատանքները սկսեց հայաբնակ քաղաքներում եւ գիղե-րում: Դրանք մեծ քափ ստացան յատկապէս այն ժամանակ, երբ 1920 թականին Հայաստանում իշխանութիւնը յանձնեց կոմունիստներին, եւ մի խումբ մտաւորականներ, թողնելով Հայաստանը, հաստատեցին Իրանում եւ հիմնեցին իրանահայ ազգային կեանքի այլազան պահանջները հոգացող

հանգրուաններ՝ դպրոցական, մշակութային, մարզական եւ կրօնական բնագաւառներում:

Քսաներորդ դարի սկզբին Իրանում պարսիկ եւ հայ մտաւորականները միջազգային սոցիալիզմ էին քարոզում եւ այդ ուղղութեամբ աշխատանքներ էին տանում:

Ռեզա Շահի քաղաքութեան օրօք խիստ բռնութիւններ եւ բանտարկութիւններ սկսեցին՝ այդ գաղափարը տարածող մարդկանց դէմ: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին, երբ Ռեզա Շահն աքսորեց, եւ Մոհամմադ Ռեզան գահ բարձրացաւ, Իրանի կոմունիստները հիմնեցին Թուրէ կուսակցութիւնը, որը հովանաւորում էր Խորհրդային Միութեան կողմից:

Որոշ հայերն էլ ընդգրկեցին այդ կուսակցութեան շարքերը եւ նոյնիսկ կարողացան մէկ շրջան էլ խորհրդարանում մի պատգամաւոր ունենալ: ՀՅԴ-ի եւ հայ Թուրէականների միջեւ տուր պայքար ծաւալեց, այդ երկու կուսակցութիւնները յաճախ իրենց վրայ կրել են Իրանի քաղաքական կեանքի անց ու դարձը՝ վերելք ու վայրէջք ապրելով:

Քսաներորդ դարի վերջում երեք կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցան. առաջինը՝ Իրանի իսլամական յեղափոխութիւնն էր, եւ 2500 տարւայ քաղաքութեան անկումը: Այն մեծ անդրադարձ ունեցաւ իրանահայ համայնքի ներքին կեանքում, թուրէականները բաւականին աշխուժացան՝ նոր միութիւններ ձեւաւորելով:

Նրանց դիրքորոշումը ազգային իշխանութիւնների հանդէպ բացասական էր:

Չնայած, որ հայերն Իրանում դարեր պատմական անցեալ ունեն, այնուամենայնիւ իրենց կենցաղը, մշակոյթը, կրօնը, դպրոցները մինչեւ օրս էլ պահպանել են իւրաքանչիւր ճնշման դիմակայելով: Եւ երբ թուրէականները միջազգային սոցիալիզմ էին քարոզում, դա չէր համընկնում ազգային իշխանութիւն հանդիսացող ուժերի կողմից կիրառած գաղափարներին, որը պատճառ հանդիսացաւ, որպէսզի ժողովուրդը

ինքնաբոխ կերպով սատար կանգնէր նրանց եւ արգելք հանդիսանար ձախերի որեւէ յաջողութեան ձեռք բերմանը՝ իրանահայ ազգային կեանքում:

Երկրորդ իրադարձութիւնը, դա Իրանի իսլամական կառավարութեան կողմից հասցւած ծանր հարւածն էր, ինչը Թուրէ կուսակցութիւնը եւ նրան պատկանող բոլոր կազմակերպութիւնները՝ ողջ երկրի մասը տարավ արմատախիլ արեւցին:

Եւ վերջինը՝ Խորհրդային Միութեան փլուզումն էր, որի հետեւանքով ոչ միայն Իրանում եղած թուրէականները, այլ նաեւ աշխարհի համարեայ բոլոր կոմունիստական կուսակցութիւնները մնացին անպաշտպան: Ռուսաստանի ֆեդերացիայում եւ 14 նախկին Խորհրդային հանրապետութիւններում տիրեց կապիտալիստական տնտեսական համակարգ: Չինաստանն էլ հիմա արագօրէն անցում է կատարում դէպի նոյն համակարգը: Այսօր ամբողջ երկրագնդում ոչ մի երկիր չկայ, որպէսզի կարողանայ մի այլ երկրի կոմունիստական գաղափարախօսութիւնը պաշտպանի:

Եւ դա էր պատճառը, որ Իրանահայ համայնավարները եւս մնացին անպաշտպան: Իրանի ձախերն երկու մասի էին բաժանուած. մի խումբը՝ Թուրէ կուսակցութեան անդամներն էին, միւսը՝ Խորհրդային Հայաստանի կողմնակիցներն ու համակիրները: Հիմա, որ Հայաստանը ազատ է եւ անկախ՝ մտահոգութիւնն էլ աւելի է փարատել:

Սա է մեր գաղութի համառօտ քաղաքական անցեալի պատմութեան մի մասը:

Հիմա անդրադառնանք այսօրւայ մեր ազգային դրածքներին (ստորեւ երկու կողմերը կը բնորոշենք աջ եւ ձախ բառերով, աջերը՝ Ազգային Առաջնորդարանի դրածքը համակրող ուժեր, ձախերը՝ Ազգային Առաջնորդարանի դրածքին դեմ կանգնած ուժեր):

Տարիներ շարունակ, աջերը նրստել են իրենց հրեղէն ձիւնն եւ ըջել են, առանց արգելքի՝ տափարակ դաշտում: Գաղութի բոլոր դրածքները

տարիներ շարունակ նրանց տրամադրության տակ են եղել: Ըստ նրանց՝ ձայնը նույն տաս տարուայ առաջուայ ձայնն է, փաստօրէն, նրանք ձայնեղին նախկին ակնոցով են նայում:

Բայց սա նրանք կիրառում են միայն իրենց շահերն պաշտպանելու նպատակով: Նրանք միշտ ցանկացել եւ ցանկանում են ձայնեղին ազգային իշխանութեան ղեկից հեռացնել, իսկ եթէ դա այսպէս չէ, ապա ինչո՞ւ է, որ հայաստանցիների հետ հիւրախաղերի ընթացքում, նրանցից ոչ մէկի մտքովն էլ չէր անցնում, թէ այդ անձնատրութեան հետ ,որ նկարել են, եւ թերթումն էլ դեռ նկարը տեղադրել , մի քանի տարի առաջ կոմունիստական կուսակցութեան անդամակցութեան փաստաթուղթը իր գրպանում էր կրում:

1993 թականին, երբ հանգուցեալ Կարէն Դեմիրճեանը ժամանեց Թեհրան, «Արարատ» մարզաւանի դռնապահը, յատուկ կարգադրութեան համաձայն, արգելեց նրան ներս մտնել եւ նոյնիսկ նոյն օրուայ թերթը յայտարարեց, թէ Հայաստանի դահիճը ժամանել է Թեհրան, բայց երբ նա ընտրեց Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ, անխտիր բոլոր կուսակցութիւնների բարձրագոյն ատեանները նրան շնորհատրեցին, եւ հոկտեմբերի 27-ի ողբերգութիւնից յետոյ, նրա ընտանիքին ցաւակցութիւն յայտնեցին: Դա շատ ճիշտ, խելացի որոշում եւ քաղաքականութիւն էր, դա պէտք է մեր համայնքում եւս կիրառուի:

Աջը՝ ձայնին մեկուսացնելով, դիմացինին պահում է իր ազդեցութեան ոլորտում, ինչպէս նշեցինք, նրանք էլ պայքարի անցեալ եւ կարողութիւն ունեն եւ կը կազմակերպեն այն, ինչ որ պէտք է: Վերջին խորհրդարանական ընտրութիւնները դրա պարզ գրաւականն է, ուր անհասարար պրոպագանդայի պայմաններում, ձայնեղին յաջողեց ձեռք բերել ընդհանուր ձայների մօտաւորապէս 25%-ը, մի թիւ, որը չի կարելի անտեսել: Եթէ այդ ու ձայնի միջեւ շարւած պատը չփլուի, եւ խտրութիւնները չվերացնեն՝ անգիտակցաբար նրանք կը առաջնորդեն ղեկի իրենց ինքնավարութիւնը: Եւ դժբախտաբար դրան են նպաստում նոր մշակւած օրէնքները: Ըստ որոնց՝ թոյլ է տրուում «Անջոման Խալիֆեզարի»-ներ (իմա՝

Թեմական միութիւններ՝ Ազգային Առաջնորդարաններ) ունենալ, տարբեր ուղղութիւն ունեցող եկեղեցիներ եւ դպրոցներ, եւ դա հասարակագոր է համայնքի քայքայմանը:

Ցանկացած կազմակերպութեան մէջ ընդմութեան անկայութիւնը դիրքին է եւ անհրաժեշտ, եւ վերջապէս հաշուառի եւ հաշուետուի պարագաներ կան, արդե՞օք համայնքում հնարուոր է, որ միայն աջը՝ աջին հաշուետու լինի, իսկ ձայնը՝ ձայնին, նման միակողմանի որոշումները երբէք չեն կարող նպաստել համագազային շահերի իրականացմանը:

Վերոյիշեալ տողերը գրելով՝ նպատակս այն չէ, որպէսզի ձայների փաստաբանը կամ նրանց պաշտպանը հանդիսանան, երբ նրանք պաշտպանում էին դրսի հոսանքներով, եւ, ընդհակառակը, իմ ուժերի սահմաններում, պայքար եմ ծաւալել նրանց դէմ, որս փայլում ապացոյցն է՝ 1980-1986 թականների մամուլը, բայց այսօր ամեն ինչ փոխուել է, եւ մենք պիտի ընդօրինակենք Իրանի ժողովրդի այս վերջին երեք տարիների ընթացքում տեղի ունեցած ժողովրդական շարժումները, եւ նրանց անդրադարձը ժողովրդի վերայ:

Այսօր մեր համայնքը միաբանութեան կարիք ունի, երկու կողմերն էլ հայ ժողովրդի զաւակներն են հանդիսանում՝ միանալով եւ միասնաբար աշխատելով, կը կարողանան պայքարել արտագաղթի ցաւալի երեւոյթի դէմ:

Առաջընթաց քայլը այն է, որ Թեմական Խորհրդի կողմից ընտրուած Պատգամատրական Ժողովի ընտրական յանձնախումբը միակողմանի չէ, յուսանք, որ ընտրութիւնները կը լինեն արդար, եւ իրանահայ համայնքին վայել:

Եկէք չնոտանանք, որ ազգին եւ հայրենիքին սիրելը, ոչ ոքի սեփականութիւնը չի կարող լինել, այս ասպարեզում ո՛չ հարուստը, ո՛չ աղքատը, ո՛չ ուժեղը, ո՛չ էլ թոյլը՝ չեն կարող գերազանցել միմեանց: ■

**Ծար. էջ 13-ից**

Ռ. Վարդանեան- Անկախութիւնը դեռեւս մէկ բառով չէ, դեռեւս ընթացքի մէջ է, ցաւալիօրէն այդ «անցումային շրջան» աւաճող մենք դեռ չենք անցել եւ ինչքան էլ ջանում ենք այս շրջանում աշխուժացնել ու ակտիւացնել մեր աշխատանքը, դեռեւս չի յաջողում: Դա գալիս է ժողովրդի սոցիալապէս ծանր վիճակից, իսկ եթէ ժողովուրդը սոցիալապէս անապահով է, նա չի ձգտի որեւէ տեղ գնալ, իր հանգիստը կազմակերպելու, արեւստի այս կամ այն կենտրոնը այցելելու: Սա վատ է: Բայց ամէն դէպքում անկախութիւնը իր հետ բերել է նաեւ դրական շատ բաներ: Այսօր մենք կարող ենք ազատ տնօրինել մեր խաղացանկը, ազատ որոշել, թէ որտեղ ենք գնում, որտեղ ենք հիւրախաղեր կազմակերպում, կարող ենք վերջապէս տնօրինել դրամը, որտեղ եւ ինչ գնով վաճառել տոմսը՝ վճարելով բոլոր պետական հարկերը, ինչպէս որ կարգն է: Բայց, ամէն դէպքում, քանի ժողովրդի սոցիալական վիճակը անկայուն է, դժուար է որոշել, թէ ինչ է շահել արեւստը այս անկախութիւնից:

-Ինչ՞ կը մաղթեիք Իրանի Ձեր հանդիսատեսին:

Տիկ. Բ. Գեորգեան- Աշխարհի ամենալաւ բաները: Ես այստեղ տեսայ հրաշալի հայեցի դաստիարակութիւն՝ իրանահայ ընտանիքներում: Շատ կուզենայի, որ այդ լաւ դաստիարակութիւնը պահպանւեր, եւ չնարէր այն սերը, որը հայրենիքի նկատմամբ իրանահայրեր տածում են... երբէք չմարեր:

Ն. Յովհաննիսեան- Միայն բարիքներ իրանահայ հանդիսատեսին: Այն ջերմութիւնը, որը ցուցադրեցին մեր նկատմամբ պահպանւեր երկար: Ընտրականութիւն իրենց ցուցադրած վերաբերմունքի համար, եւ ամենայն երջանկութիւն բոլորին: ■

*Չորրորդ վարեց՝  
Սուսաննա Կամբարձումեանը*

**Նկարչութեան եւ պատկերացման զարգացման դասընթացներ**  
3-13 տարեկանների համար  
Մանկավարժ՝ Ռիմա Տէր Յովհաննիսեան  
Հեռ. 7826792

## ՐԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՒ ԸԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆՆԵՐԸ

Ժողովրդականները արեւմտահայութեան իրաւունքների ու ջանքերի ոտնահարում համարեցին կառավարութեան յայտարարութեան այն հատածը, որտեղ չէ ներկայ կառավարութիւնը իրեն հռչակում էր «Միացեալ եւ անկախ Հայաստանի կառավարութիւնը» անտեսելով ազգային պատկրակութեան ու նրա դեկավար Պօղոս Նուրբար փաշայի գոյութիւնը: Այստեղ կարելի է կարծել, որ ժողովրդականներին մտահոգում էր ոչ այնքան խնդրի իրաւաբաղդակական կողմը, որքան այն, որ միացեալ Հայաստանի կառավարութեան դէպքին հաւակնում էր իրենց կուսակից ու պաշտելի Պօղոս Նուրբարը: Ժողովրդականները ցանկանում էին այդ բաղձալի պաշտօնում տեսնել ոչ թէ դաշնակցականի, այլ ռամկավար Պօղոս փաշային: Նշանակում է՝ այս տարածայնութիւնների հիմքում ընկած էին աւելի շատ կուսակցական ու անձնական հաշիւներ, քան համապետական ու համազգային գերագոյն շահեր:

Այս ամէնը առաջ բերեց կառավարախորհրդարանական խոր ճրգնածամ: Ժողովրդականները յատկապէս բողոքեցին առանց խորհրդարանի գիտութեան արեւմտահայ 12 ներկայացուցիչների (բոլորն էլ դաշնակցական) խորհրդարան հրաւիրելու որոշման դէմ: Անշուշտ, իրաւական, էլ չենք սասում բարոյական տեսակէտից, պատշաճ չէր ու կառավարութեան իրաւասութիւնից միանգամայն դուրս էր խորհրդարանի պատգամաւորներ հրաւիրելու մասին որոշում կայացնելը, թէն այդ ժամանակ խորհրդարանի իրաւունքները մէկ ամսով յանձնել էր կառավարութեանը: Հասկանալի է, որ կառավարութեան որոշմանը 12 բուրքահայ դաշնակցականների մուտքը խորհրդարան ապահովում էր ՀՅԴ կայուն մեծամասնութիւն խորհրդարանում, որն էլ մեծ անհանգստութիւն ու վրդովմունք առաջացրեց «աջ» եւ «ձախ» ընդդիմութեան շրջանում:

Նման խիստ լարած պայմաններում, 1919 թ. յունիսի 4-ին տեղի ունեցաւ խորհրդարանի նիստը, որին մասնակցում էին նաեւ արեւմտահայ



12 ներկայացուցիչները: Նախապէս կազմած յայտարարութիւններով ըսկզբում հանդէս եկաւ Մոց.- դէմ. խընքակցութեան ներկայացուցիչ, պատգամաւոր Գ. Ղարաջեանը, իսկ յետոյ՝ ՀԺԿ խմբակցութեան կողմից՝ Գ. Տէր Խաչատրեանը: Նրանք իրենց կուսակցութիւնների ու խընքակցութիւնների անունից յայտարարեցին, որ կառավարութիւնը դիմել է անօրինական քայլի, փաստօրէն տեղի է ունեցել պետական յեղաշրջում, ուստի իրենք այնուհետեւ հրաժարւում են խորհրդի աշխատանքների մասնակցելուց:

Յայտարարութիւնների ընթերցումից յետոյ, որպէս բողոքի նշան, Ժողովրդական եւ Մոց.-դէմ. պատգամաւորները ցուցադրաբար հեռացան խորհրդարանի դահլիճից: ՀԺԿ եւ Մոց.-դէմնկրատների օրինակին հետեւեցին նաեւ էսէնները: Մոց.-դէմնկրատները եւ էսէնները, որպէս բողոքի նշան, հրաժարեցին խորհրդարանի աշխատանքների մասնակցելուց ոչ թէ նրա համար, որ իրենք էլ Ժողովրդականների մասնակցութեանը մասնակցում էին Պ. Նուրբար փաշայի դեկավարած արեւմտահայ ազգային պատկրակութեան տեսակէտը տաճկահայ խնդրում, այլ, որ «ձախները առհասարակ չէին ընդունում միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարը»:

Մտեղծւած փակուղային իրավիճակում չէր մնում այլ բան, քան յաջորդ օրը՝ յունիսի 5-ին վաղաժամկէտ դադարեցնել խորհրդարանի աշխատանքները եւ արագացնել նոր ընտրովի խորհրդարանի ձեւաւորման աշխատանքները: Այդ ժամանակ էլ Խորհրդի օրենսդրական իրաւունքները կրկին անցան գործադիր իշխանութեանը՝ կառավարութեանը:

Արդարեւ, որքան էլ ընդունելի կամ վիճելի լինեն այս ճգնաժամի հետ կապւած հակամարտող կողմերի թեր կամ դէմ փաստարկները, մի բան պարզ է, որ այս ամէնի հիմնապատճառն այն էր, որ Հայաստանը տակաւին չուներ իր հիմնական օրէնքը՝ սահմանադրութիւնը: Հանրապետութիւնում սահմանադրութեան եւ այլ հիմնարար օրէնքների բացակայութեան պատճառով մերք խորհրդարանն էր խախտում իր իրաւասութեան շրջանակները՝ ստանձնելով նաեւ գործադիր մարմնի Ֆունկցիաներ, մերք էլ կառավարութիւնն էր գործադիր իշխանութեանը զուգահեռ ստանձնում օրենսդիր մարմնի լիազօրութիւններ: Խորհրդարանի դէրի նսեմացման եւ գործադիր իշխանութեան դէրի աստիճանական բարձրացման միտումը ուժեղացաւ յատկապէս երկրորդ խորհրդարանի օրօք: Առաջին խորհրդարանն իր տասը ամիսների աշխատանքի արդիւնքում, մեր հաշուներով, ընդունել է 116 օրէնք:

1919 թ. գարնանը երբ Հայաստանի Հանրապետութեան վիճակը նկատելիօրէն կայունացել էր, սահմաններն ընդարձակել էին, շինականն անցել էր խաղաղ աշխատանքի, օրակարգի հարց դարձաւ նշանակովի խորհրդարանի արձակումը եւ ժողովրդական ընտրութիւնների միջոցով նոր, իսկական խորհրդարանի կազմաւորումը: 1919 թ. յունիսի 21-23-ը տեղի ունեցած ընտրութիւնները, բոյկոտեցին եւ դրանց չմասնակցեցին ժողովրդականները, ռամկավարները, սոց-դեմոկրատները, բոյշելիկները եւ այլն:

Համաձայն ընտրութիւնների մասին օրէնքի՝ դրանք անցան համամասնական կուսակցական սկզբունքով եւ նախատեսւած 80 պատգամաւորական տեղերից 72-ը զբաղեցրեց ՀՅ Դաշնակցութիւնը: Անշուշտ, ընտրութիւնների ժամանակ թոյլ էին տրուել զանազան խախտումներ եւ զեղծարարութիւններ: Երկրորդ՝ ընտրովի խորհրդարանի բացումը տեղի ունեցաւ առաջին խորհրդարանի բացումից ուղիղ մէկ տարի յետոյ՝ 1919 թ. օգոստոսի 1-ին:

Խորհրդարանի նախագահ ընտրեց Աւետիս Ահարոնեանը, կազմեց նոր կառավարութիւն, ձեւատրուեցին խորհրդարանի 12 յանձնաժողովներ: Ութ պատգամաւորներից կազմւած ընդդիմութիւնից նոյնպէս ընդգրկուեցին յանձնաժողովներում:

Օգոստոսի 15-ի միտում լսեց նորընտիր վարչապետ՝ Խատիսեանի կառավարութեան յայտագիրը: Նրանում ներկայացւած էին նոր կարիքների ներքին ու արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւններն ու մտտեցումները: Յայտագրում պաշտպանուած էին միացեալ Հայաստանի անկախութեան, օտար ներդրումների խրախուսման, կարածատիրական հողերի ազգայնացման, պարտադիր սկզբնական կրթութեան եւ այլ գաղափարներն ու պահանջները: Խատիսեանի կարիքների յայտագրին անվստահութիւն են յայտնում միայն էւեռները:

Ուսմկավար, կենսունակ պետութեան ամենաբնորոշ գծերից մէկը, անշուշտ, բազմակուսակցական հիմքի վրայ իսկական ընդդիմութեան ձեւատրումն էր:

Երկրորդ խորհրդարանի ընդդիմութիւնը, համեմատած առաջինին, շատ արեւի թոյլ էր, քանզի 72 պատգամաւորներից կազմւած ՀՅԴ խըմբակցութիւնը դիմակայում էին ընդամենը 4 էւեռ, 3 մուսուլման եւ 1 անկուսակցական (յետագայում՝ բոլշեւիկ): Իշխող ՀՅԴ կուսակցութեանը անհամակիր ընդդիմութիւնն արեւի լայն տեսանկիւնով էր հանդէս գալիս խորհրդարանից դուրս: Դրանք էին՝ բոլշեւիկները, հայ ժողովրդականները, հայ ռամկավարները, մենշեւիկները, անկախ սոցիալիստները, «սպեցիՖիկները», հնչակեանները:

Երկրորդ խորհրդարանի ընդդիմութեան թուրքեան բացը լրացել է հիմնական կառավարող ՀՅԴ խըմբակցութեան ներսում առկայ տարբեր թելերով ու հոսանքներով: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ ՀՅԴ եւ նրա խորհրդարանական խըմբակցութեան ներսում գոյութիւն են ունեցել ազգային, ընկերավարական, պետաիրարական, յեղափոխական եւ այլ հակումներ ունեցող թելեր ու հոսանքներ: Դա երեսում է թէկուզ այն փաստից, որ իրարական, քաղաքական, տնտեսական, կադրային եւ այլ բնոյթի խնդիրների

քննարկումների ժամանակ ՀՅԴ խըմբակցութիւնը մի քանի անգամ դրել է իր իսկ ձեւատրւած կառավարութեան վստահութեան հարցը:

ՀՅԴ խորհրդարանական խըմբակցութիւնը շարժափոխի դեր է կատարել կուսակցութեան բարձրագոյն ղեկավար գործադիր մարմնի՝ Բիւրոյի եւ կառավարութեան միջուկ, ինչպէս սահմանել էր Դաշնակցութեան 9-րդ ընդհանուր ժողովում: Խորհրդարանական խըմբակցութիւնն էր այն հիմնական խողովակը, որով կուսակցութիւնն անցկացնում էր իր քաղաքականութիւնը, այսինքն՝ հիմնականում պահպանել են պառլամենտարիզմի ժողովրդավարութեան սկզբունքները: Ասում է հիմնականում, որովհետեւ արձանագրւել են նաեւ դէպքեր, երբ ՀՅԴ Բիւրօն, ուղղակի միջամտել է ՀՅԴ խըմբակցութեան, խորհրդարանի եւ նոյնիսկ կառավարութեան ներքին գործերին: Դրութիւնը կտրուկ փոխւեց 1920 թ. մայիսին, երբ, քաղաքական հանգամանքների թելադրանքով, ՀՅԴ Բիւրօն խըմբակցութեան առջեւ պահանջ դրեց իշխանութիւնը յանձնել իրեն:

Երկրորդ գումարման խորհրդարանի օրենսդրական աշխատանքները, համեմատական կարգով, հասուն էին ու արեւատավարժ:

Իրաքանչիւր պետութեան ժողովրդավարութեան մակարդակը կարելի է չափել նաեւ նրա դատական համակարգով եւ առաջին հերթին երդեալ ատենակալների ինստիտուտի առկայութեամբ: Նման համակարգի ձեւատրման հարցը քննել էր դեռեւս Հայաստանի խորհրդում, որի նախաձեռնողն էր ՀԺԿ խըմբակցութիւնը: Արեւի ուշ այն հաստատուեց եւ դրեց գործողութեան մէջ:

Խորհրդարանը որոշակի ուշադրութիւն դարձրեց նաեւ վերաշինութեան հարցերին: Մասնատրւապէս, 1920 թ. ապրիլին Երեսնի յատկազմման եւ կառուցապատման նպատակով որոշեց բացել 22904950 ռ. վարկ:

1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթի վարերացմամբ հաստատուեց «Պետական լեզու մասին» օրէնքը: Համաձայն այս օրէնքի հայերէնը դառնում էր պարտադիր պետական եւ հասարակական բոլոր հաստա-

տութիւններում: 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին ընդունուեցին օրինագրծեր ազգագրական-մարդաբանական թանգարան, պետական հանրային գրադարան, թատերական վարժարան հիմնելու մասին, որոնք դրեցին հանրային կրթութեան եւ արեստի նախարարութեան իրարատութեան տակ: 1920 թ. յունւարի 3-ին ընդունեց օրէնք՝ եկեղեցին պետութիւնից անջատելու մասին: Ապրիլի 3-ին հաստատուեց մէկ այլ օրինագիծ՝ ծխական-եկեղեցական դպրոցները պետական աշխարհիկ դարձնելու մասին: Միաժամանակ յայտարարում էր խղճի ազատութիւն: Թոյլատրում էին ինչպէս պետական, այնպէս էլ ոչ պետական դպրոցները: Օրէնքում պահանջ էր դրւած՝ դպրոցը հեռու պահել քաղաքականութիւնից եւ այլն:

Երկրորդ խորհրդարանի ընդունւած օրէնքներից ուշադրութեան է արժանի կրթութեան եւ արեստի նախարար Ն. Աղբալեանի նախաձեռնութեամբ ներկայացրւած օրինագիծը՝ «Հայաստանի ազատագրութեան կռում գոհւած զինուորների գաւակներին անվճար դպրոցական պիտոյքներ բաժանելու մասին», որը հաստատուած է 1920 թ. յունւարի 5-ին:

Հարկ է նշել, որ այս խորհրդարանում ընդունւած օրէնքներն արեւի շատ ունեցել են սոցիալական ուղղաձոնութիւն, որով էլ ընդգծուած էր երկրի հիմնական քաղաքական ղեկավար ուժի՝ ՀՅԴ սոցիալիստական բովանդակութիւնը:

Հանրապետութեան սոցիալ-տրնտեսական կեանքի ամենախցելի կողմերից մէկը Ֆինանսներն էին: Խորհրդարանի կողմից թոյլատրող Ֆինանսական յատկացումների հիմնական մասը գնում էր երկու կարեւոր ոչ արտադրական ոլորտների՝ բանակի եւ գաղթականութեան գոյութեան պահպանման ուղղութեամբ: Կառավարութեան եւ յատկապէս Բիւրօ-կառավարութեան տնտեսապէս չհիմնաւորւած Ֆինանսատնտեսական քաղաքականութեան հետեւանքով (խորհրդարանը տեսական, հարկադիր արձակուրդում էր) հայկական դրամն արագօրէն արժեզրկուեց եւ երկրում փաստօրէն առաջացաւ Ֆինանսատնտեսական ճրգնաժամ:

Ճառ. 3



### Էջմիածնի

## «Շարլ Ազնաուր»ի անվան թատերախմբի տիկնիկային ներկայացումների մասին

Էջմիածնի «Շարլ Ազնաուր»ի անվան թատերախումբը, որի ղեկավարն է պրն. Ռոբերտ Վարդանեանը, «ՐաՖՖի» մարզամշակութային միութեան հրավերով, մայիսի 2-ից թեղահամայնի ուշադրությունն է ներկայացրել մի քանի հետաքրքիր ներկայացումներ:

Նրանց խաղացանկում կային երեք տիկնիկային ներկայացումներ՝ «Շունն ու կատուն», «Ազահ մարդը» եւ «Սեղորբիթ տնակը»:

Տիկնիկային ներկայացումների վերաբերելով գրուցեցինք թատերախմբի ղեկավարներից երեքի հետ:

-Պրն. Վարդանեան, Ձեր թատերախումբը արդեն երկրորդ անգամն է լինում Թեհրանում: Փոխել է, արդե՞օք, Թեհրանի Ձեր փոքրիկ հանդիսատեսի վերաբերմունքը եւ ինչո՞վ է տարբերում այս այցելությունը նախորդից:

Ռ. Վարդանեան.- Այո, երկրորդ անգամ է գալիս ենք Թեհրան: Մակայն հանդիսատեսի առումով փոփոխություն գրեթէ չկայ, նոյն ջերմութեամբ է հանդիսատեսը ընդունում ներկայացումները եւ միշտ սիրով է յաճախում: Միայն այս անգամ մի քիչ ուշ ենք տեղ հասել, այստեղ դպրոցի դասերի աւարտն է եւ դա կարծես խանգարում է, որպեսզի հանդիսատեսի թիւը աւելի մեծաքանակ լինի ներկայացումների ժամանակ: Ուրիշ տարբերություն չկայ: Եւ պէտք է ասեմ որ ի տարբերություն նախորդ անգամայ՝ այս անգամ բերել ենք երեք տիկնիկային ներկայացում, այսինքն մէկ նոր գործ ես՝ Միխայիլ Գարեանովի «Սեղորբիթ տնակը», շատ-շատ հետաքրքիր մի ներկայացում է: Եւ, ի ուրախութիւն

մեզ, ներկայացումն ընդունում է մեծ ջերմութեամբ, այնքան, որ առաջին ներկայացումից յետոյ եղան բազմաթիւ հեռախօսազանգեր «ՐաՖՖի» միութիւն, որպէսզի դա դպրոցներում նոյնպէս ներկայացի: Նոյնիսկ ես լսեցի, որ առաջարկ է եղել մեծահասակների համար էլ օր եւ ժամ յատկացնել, եւ սա մեզ ուրախացնում է:

-Ի՞նչ տարբերութիւն կայ Հայաստանի հանդիսատեսի եւ Սփիւքի՝ մասնատրապէս Իրանի հանդիսատեսի միջեւ:

Ռ. Վարդանեան.- Եթէ հանդիսատես ասելով, մենք երեխաներին ի նկատի ունենք՝ տարբերութիւն գրեթէ չկայ, որովհետեւ երեխաները միշտ անկեղծ են, միշտ պահանջկոտ: Նրանց աչքից չի վրիպում ոչ մի թերութիւն, որոնք կարող ենք թոյլ տալ անկախ մեր կամքից: Երեխաները միշտ ընդունում են միեւնոյն ջերմութեամբ եւ անկեղծութեամբ: Տարբերութիւն գրեթէ չկայ: Միայն մի տարբերութիւն: Այսօրայ դրութեամբ Հայաստանում մի քիչ աւելի են կարողանում հաղորդակցուել, դիտել տարբեր խմբերի ելոյթներ, իսկ այստեղ, կարծում եմ, դա դեռ այնքան շատ չէ:

-Տիկ. Իզաբելլա, մենք գիտենք, որ դուք եւ Ձեր ամուսինը՝ պրն. Ռ. Վարդանեանը, որը թատրոնի ղեկավարն է, երկար տարիներ է, որ աշխատում էք էջմիածնի թատրոնում, ինչպէս է՞ք համատեղում թատրոնը ընտանեկան կեանքի հետ, դա խանգարում է, թէ ընդհակառակը օգնում:

Գիտենք նաեւ, որ այս վերջին տարիներին Հայաստանի սոցիալական դժարին պայմաններում անգամ չէք դադարեցրել Ձեր աշխատանքը: Ի՞նչն է այդպէս կապում Ձեզ թատրոնին: Արդե՞օք միայն սերը բաւական է:

Տիկ. Իզաբելլա Գեորգեան.- Կարծում եմ բաւական է սերը, մենք՝ երկուսս էլ երեխաներ շատ ենք սիրում, զգում ենք, որ երեխաները ունեն մեր աշխատանքի կարիքը, ինչքան էլ դժարութիւններ լինեն, մենք միասին յաղթահարում ենք: Շատ ենք սիրում փոքրիկներին եւ ամէն ինչ անում ենք նրանց համար: Մեր՝ իմ եւ ամուսնու աշխատանքը մեզ օգնում է մեր ընտանիքում: Նոյնիսկ միասին պիեսներ ենք յօրհ-

նում եւ օգնում եմ բանաստեղծական տեքստի պատրաստմանը, երաժշտական տեքստեր ենք յօրհնում, որովհետեւ քիչ կան մանկական քստեղծագործութիւններ: Մի խօսքով, ուզում ենք դաստիարակչական աշխատանք կատարել երեխաների համար:

-Պրն. Նորայր Յովհաննիսեան, մենք գիտենք, որ դուք նոյնպէս էջմիածնի թատրոնում երկարածիգ տարիների փորձ ունեք: Ի՞նչն է Ձեզ կապել ու սերտացրել թատրոնին:

Ն. Յովհաննիսեան.- Իհարկէ, սերը, յատկապէս սերը եւ արւեստի, եւ թատրոնի նկատմամբ: Գաղտնիք չէ, որ լաւ դաստիարակած, լաւ կրթած երեխաները մեր ապագան են, իսկ երեխան մանկութիւնից, եթէ չկապի արւեստի հետ նրա գեղագիտական ճաշակը չի զարգանայ եւ լիարժէք քաղաքացի չի կարող դառնալ: Հէնց միայն այս հանգամանքը մեզ դրոյեց, որ ծրագրի մէջ ունենանք տիկնիկային ներկայացումներ:

-Պրն. Նորայր, դուք ծնել էք Իրանում եւ 1946 թւականին հայրենադարձել, հիմա բնակւում էք էջմիածնում: Ինչպէ՞ս էք զգում այսօր Ձեզ ծննդավայրում, եւ որտե՞ղ է անցել Ձեր մանկութիւնը:

Ն. Յովհաննիսեան.- Այո, ես ծնել եմ Իրանի Թարիզ քաղաքում: Եօք տարեկան էի, երբ հայութեան հետ հայրենադարձեցի Մայր Հայաստան: Երկար տարիներից յետոյ ինձ քայտ վիճակեց վերադառնալ Պարսկաստան: Բայց, ցաւօք սրտի, ժամանակի տրութեան եւ հանգամանքի բերումով չկարողացայ լինել իմ ծննդավայրում՝ Թարիզում եւ տեսնել այն թաղամասը, այն տունը, որտեղ ծնել եմ եւ ապրել: Իմ գործընկերները կարող են վկայել, թէ ինչ յուզումներ եմ ունեցել այստեղ գալով: Թեհրանում մենք շատ բարեկամներ ունենք, այցելում ենք միմեանց: Ի հարկէ, այս բոլորը յուզումնայից է եւ այստեղ ամէն ինչ փոխել է: Լաւ է, որ առաջընթաց կայ, բայց վատ է, որ իմ տեսածը նախկին տեսքով այլեւ չկայ:

-Հետաքրքիր է իմանալ, Հայաստանի անկախութիւնը, եւ ընդհանրապէս այս վերջին փոփոխութիւնները ինչ՞ տեսցին Ձեր թատրոնին:

**Շար. տեսնել էք 10-ում**



# ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս.ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Լ.Գ.Մինասեան

Նոր Զուղայի Թանգարանը գրա-  
նում է Ս.Ամենափրկիչ վանքի շրջա-  
փակում:

Հայերը նոր Զուղայում հաստատ-  
ւելու և վանքի հիմնադրութեան օ-  
րից՝ 1606 թականից, իրենց հետ բե-  
րել և տեղում գրել են գրչագիր գրքեր,  
որոնց վրայ յետագայում անելացել  
են նաև տպագիր գրքերը:


Միջև 20-րդ դարի սկիզբները, այդ  
գրքերը պահուել են վանքի միա-  
բանների մօտ և Առաջնորդարանի  
փոքրիկ սենեակների մէկի մէջ, ապա  
1905 թականին, ի յիշատակ Զու-  
ղայի պատմագիր Յարութիւն Տէր  
Յովհաննէանի, նրա որդու՝ Թադէոսի  
ծախսով, վանքի տաճարի հիւսիսա-  
յին կողմում, կառուցել է 5 սենեակից  
բաղկացած մի շէնք, որտեղ տեղա-  
տրուել են այդ գրքերը:

Այս շէնքը, մինչև 1930 թականը,  
ծառայել է որպէս գրադարան, ուր  
գրքերի հետ դրած են եղել նաև մի  
քանի իղաներկ նկարներ և այլ իրեր:  
Վերոյիշեալ թականներին նկարիչ  
Սարգիս Խաչատրեանը Սպահան է  
գալիս, արքայական պալատների  
որմնանկարներն արտանկարելու  
համար, նրա խորհրդով և օրւայ  
Թեմական Իշխանութեան ջանքե-  
րով, շէնքը վեր է ածուում թանգարա-  
նի, իսկ գրքերը փոխադրուում են վան-  
քի Առաջնորդարանի նախկին շէնքը:

## ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՈՒ ՑՈՒՑԱՂՈՒՄ ԻՐԵՐԸ

Թանգարանի իրերը գրադարանի  
շէնքում մնում է մինչև 1971 թականը,  
երբ թանգարանի համար կառուցուում  
է առանձին մի շէնք, ուր փոխադրուում  
են թանգարանային իրերը, իսկ գրքե-  
րը նորից տեղափոխուում են նախկին  
տեղը:

Թանգարանի ներկայ շէնքը երկ-  
յարկանի է, արդիական յարմարու-  
թիւններով. կառուցուել է սպիանի Թե-



մի Ազգային Իշխանութեան ծախ-  
սով:

ճարտարապետն է եղել թեհրա-  
նաբնակ՝ Ժենիա Ա.Տրանդիլեանը:

Նոր Թանգարանի ձեւաւորումը  
կատարել է Բելգիայի Արքայական  
թանգարանի պատասխանատու դե-  
կավարներից և Բրուքսելի Համալսա-  
րանի դասախօսներից Պրոֆ. Ար-  
բակ Մխիթարեանի պատրաստած  
ընդհանուր ծրագրի հիման վրայ:

Թանգարանն ունի շուրջ 520 գա-  
նազան իրեր՝ պատառներ, եկեղե-  
ցական զգեստներ, դրամներ, յախ-  
ճապակիներ, Զուղայի հայ արես-  
տին և արհեստին վերաբերող տա-  
պանաքարերի ընդօրինակութիւններ  
և այլ հաւաքածոներ, որոնք ցուցա-  
դրուած են պատերին ու ցուցափեղ-  
կերում:

Թանգարանում մեծ արժէք ներ-  
կայացնող հաւաքածուներից կարելի  
է յիշատակել Իրանի արեստին վե-  
րաբերող յախճապակիները, նկար-  
ները, Զուղայի հին տարազները,  
եկեղեցական զգեստներն ու սպաս-  
ները, կրօնական և ազգային պաս-  
տառները, հայկական և պարսկա-  
կան դրամները, հին տպարանն ու  
տպագրուած գրքերը և այլն, որոնք  
բոլորն էլ ունեն իրենց յարմար և  
երեք լեզուան (հայերէն, պարսկերէն  
և անգլերէն) բացատրութիւնները:

## ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՐՉԱԳՐԵՐԸ

Թանգարանում ցուցադրուած են  
նաև շուրջ 50 ձեռագիր գրքեր, որոն-  
ցից աջ կողմի ցուցափեղկի ձեռա-  
գրերը գրուել են Նոր-Զուղայում, իսկ  
ձախ կողմինը՝ Հայաստանի զանա-  
զան վայրերում:

Ամենահին ձեռագիրը մի մագա-  
ղաքեայ Աւետարան է, որ գրուել է 10-  
րդ դարում, երկաթագիր տառերով.

գտնուում է ձախ կողմի ցուցափեղկի  
առաջին մասում, 422 համարի ներ-  
քոյ:

Չեռագրերից ոմանք ունեն շատ  
գեղեցիկ մանրանկարներ, զարդա-  
գրքեր, ճակատագրադրեր, խորաններ  
ու կիսախորաններ:

Վանքի ձեռագրական հաւաքա-  
ծոյի թիւը հասնում է 740 հատորի:

## Ստացւած գրութիւն

Նորից թլպատման  
մասին

«Լոյս»-ի չորրորդ համարում  
Դոկ. Ռուբիկ Սարգսեանի ստորա-  
գրութեամբ տպագրուել էին մի քանի  
բժշկական կարծ տեղեկութիւններ,  
որոնցից մէկն էլ թլպատման վերա-  
բերեալ աստորիացի հետազօտող-  
ների ուսումնասիրութիւնների այն  
եզրահանգումն էր, որ իբրեւ թլպա-  
տումը կանխարգելիչ ազդեցութիւն  
ունի ՍՊԻԴ-ի (էյդզի) դէմ: Իհարկէ,  
մանատիպ տեղեկութիւններ յաճախ  
են հանդիպում թերթերի կամ  
ամսագրերի էջերում, սակայն, երբ  
դրանք ընթերցողին մատուցուում են  
բժշկի անւան տակ, ապա դա պէտք է  
բժշկական տեսակետից ընդունւած եւ  
գիտական հիմնաւորում ստացած  
(ռեֆերանս) լինի, որպէսզի բժշկա-  
կան համապատասխան հաստատու-  
թիւնների կողմից արտօսնի դրա գործ-  
նական կիրառութիւնը:

Նման տեղեկութիւնների տպա-  
գրումը ճիշտ եւ ընդունելի կը լինի,  
եթէ, հեղինակը յօդւածի տակ նշի  
միւթի քաղման կամ թարգմանութեան  
աղբիւրը, ինչպէս որ ընդունւած է  
աշխարհում մամուլի օրէնքների հա-  
մաձայն: Այլապէս յօդւածը կարող է  
հանգեցնել սխալ կողմնորոշման եւ  
ազդեցութեան:

Ի վերջոյ թլպատումը շուրջ 3-4  
հազար տարիների պատմութիւն  
ունի, որն այսօրայ դրութեամբ պահ-  
պանւած է, որպէս զուտ կրօնական  
ծիսակատարութիւն եւ բժշկական  
տեսակետից որեւէ առաւելութիւն  
չունի, այլ ընդհակառակը՝ բազմաթիւ  
բարդութիւններով յղի վիրահատու-  
թիւն է երբ միզուղու բնական կաշկի  
պաշտպանւածութեան վերացման  
արդիւնքում առաջանում են միզանց-  
քի նեղացում, բորբոքում եւ այլ  
բարդութիւններ սեռական հասունաց-  
ման յետագայ ընթացքում:

Թլպատումը թոյլատրուում է միայն  
որոշ հիւանդութիւնների ժամանակ,  
որոնք պիտորոշում են մասնագէտի  
կողմից եւ ի կատար ածուում:


Դոկ. Ալ.Տրեղ Անթանեսան  
վիրաբուծ

# Հարցազրոյց Լինդա Աւանէսեանի հետ

Լոյս.- Նախ թոյլ տւէք «Լոյս» երկ-  
շաբաթաթերթի անունից շնորհա-  
կալութիւն յայտնել Ձեր ժամա-  
նակը մեզ տրամադրելու համար:



**Հարց- Խնդրեմ ներկայացէք:**  
*Պատասխան-* Լինդա Աւանէսեան,  
ծնել էմ 1972 թականին: Ստացել եմ  
միայն միջնակարգ կրթութիւն:  
**Հ.- Ի՞նչն է Ձեզ մղել՝ նկարչութեամբ  
զբաղւելու:**  
Պ.- Ես արւեստի եւ մասնատրապէս  
նկարչութեան միջոցով հոգեկան մեծ  
բաւարարութիւն եմ ստանում, իմ  
ապրումները՝ սէրը, կարօտը, յոյսը եւ  
այլն՝ յանձնելով թղթին: Եւ մանա-



ւանդ իմ պարագայում արւեստով  
զբաղւելը օգնում է մոռացութեան  
մատուցել Ֆիզիկական թերզարգաց-  
ման խնդիրը:

**Հ.- Արւեստի այլ բնագաւառներով  
հետաքրքրուել էք, թե՞ ոչ:**

Պ.- Այո, ես խխունջներով արձա-  
նիկներ եմ պատրաստում, որոնք  
ստեղծում եմ իմ ապրումների համա-  
ձայն, իմ ոճով:

**Հ.- Քանի՞ տարեկանից էք զբաղւել  
արւեստով:**

Պ.- Նկարչութեամբ զբաղւել եմ  
դեռեւս վաղ հասակից՝ 8-9 տարե-  
կանից: Ջրաներկով սկսել եմ աշ-  
խատել 16 տարեկանից, իսկ ձեռա-  
գործ աշխատանքով՝ արդէն 10 տա-  
րի է ինչ տարւել եմ:

**Հ.- Ո՞վքեր են աջակցել ձեզ:**

Պ.- Բոլորից շատ մայրս, ապա հայ-  
րս, քոյրս, եղբայրս, մի խօսքով, իմ  
բոլոր անմիջական հարազատները:

**Հ.- Արդե՞օք Ձեր ստեղծագործական  
աշխատանքը, որտե՞ խոչընդոտի չի  
հանդիպել՝ այս երկար տարիների  
ընթացքում:**

Պ.- Ամենից առաջ ինձ խոչընդոտել  
են իմ Ֆիզիկական թերութիւնները,  
բայց սիրելով արւեստը կարողացել  
եմ յարթահարել եղած բոլոր դժա-  
րութիւնները:

**Հ.- Եղե՞լ են մարդիկ, որոնք արհա-  
մարհանք են ցուցաբերել Ձեր աշխա-  
տանքի նկատմամբ:**

Պ.- Ոչ, մման բան չի եղել, բայց ան-  
տարբեր մարդիկ եղել են, եւ այդ,  
«վիրատրական անտարբերութիւնը»  
միշտ ցաւ է պատճառել:

**Հ.- Որտե՞ ցուցահանդէսում ցուցա-  
դրուել են Ձեր աշխատանքները:**

Պ.- Յաօք, հայկական կազմակեր-  
պութիւններից մինչեւ այսօր որտե՞  
արձագանք չի եղել, բայց 1995 թ. ըն-  
դգրկւելով Իրանի «Հաշմանդամների  
միութեան» կազմի մէջ, իմ աշխա-  
տանքները պարբերաբար սկսեցին  
ցուցադրուել՝ նշեալ միութեան կողմից:

**Հ.- Ինչպիսի գնահատանքի էք ար-  
ժանացել:**

Պ.- Յուցահանդէսներին յաճախ ներ-  
կայ են եղել արւեստագէտներ, որոնք  
քննութեան են ենթարկել իմ աշխա-  
տանքները: Դրանց շնորհիւ «Իրանի  
Հանրապետութեան կանանց գոր-  
ծերը վարող» բաժնի կողմից դրա-  
կան գնահատանքի առժանացայ ,  
իհարկէ բացառիկների շարքում չէի :

**Հ.- Ի՞նչ սպասելիքներ ունէք մեր  
համայնքի արւեստատէրներից:**

Պ.- Իմ սպասելիքները մեր հայկա-  
կան միութիւններից են, որոնք արդէն

նշեցի, ինձ երբէք որտե՞ ձեռով չեն ան-  
դրադարձել:

**Հ.- Իսկ ի՞նչ սպասելիքներ ունէք հայ  
համայնքից՝ ընդհանրապէս:**

Պ.- Լաւ կը լինի նրանք որտե՞ խըտ-  
րականութիւն չդնեն մարդկանց մի-  
ջեւ, բոլորին նոյն աչքով նայեն,  
երբէք չընդգծեն մարդու Ֆիզիքա-  
կան թերութիւնները: Հայ մամուլը  
պէտք է ժողովրդին փոխանցի մար-  
դուն հոգու աչքերով նայելու գաղա-  
փարը:

**Հ.- Դա նշանակում է, որ համոզւած  
էք, թէ ժողովուրդը ընթերցելով՝ կը  
ճշտի իր մման վերաբերմունքը:**

Պ.- Այո, չեմ կասկածում: Գիտէք ինչ,  
երբ հայկական միութիւններ եմ  
յաճախել (դա իհարկէ յաճախա-  
կանութիւն չի ունեցել), նրանց  
նայածքից զգացել եմ, որ շատ տար-  
օրինակ եմ իրենց համար: Եւ հարց է  
ծագել, թէ ինչով եմ տարբերում ես  
իրենցից, լոկ այն պատճառով, որ ես  
Ֆիզիկապէս տկար եմ: Ինչո՞ւ մար-  
դու հոգին չեն գնահատում, այլ՝ մար-  
մինը:



Վերջում կը ցանկանայի իմ երախ-  
տագիտութիւնը յայտնել «Լոյս» երկ-  
շաբաթաթերթի խմբագրական կազ-  
մին, եւ մասնատրապէս Ձեզ՝ օր. Նա-  
գարեանց, Ձեր բարիացակամ վերա-  
բերմունքի համար:

**Հարցազրոյցը վարեց՝  
Անի Նազարեանը**

# Շիրագները անբասիր



Անդրանիկ Ռ. Չաքարեան

Ասում են, թե Շիրագից ետ էլ Մասիս կանչող չկայ՝ Մասիսն ունի հազար պոետ, Շիրագներն՝ իր ողջ են, կան, Ամեն մի հայ ճիչն է Մասսի, տենչն՝ երագած անհասի, Ով անսիրտ դար, դեռ սպասիր Շիրագներին անբասիր:

Քանի գնում՝ վեհ է հնչում Մասսահոգի մեր մուսան, Մասիսներով են ներշնչում Շիրագները անասան, Անհատվ է վերադասում Մասիսն՝ հայոց, Պառնասից, Ձի՛ վեհասիրտ հայն է սնում փեշերում՝ իր, առնածին:

Ասում են, թե էլ քաջագուն Մասուն մոնչող չկայ՝ Մասունն ունի բիր դիցազունք առիժներեն՝ իր ողջ են, կան Չէ՞ որ Մասնա մեզ-մշուշում, երբ մրրիկն է շառաչում, Շիրագների փոթորկաշունչ մռնչիւնն է անդ շաչում:

Չուր են հոսում, գուր են ուզում վերջ տալ հայոց քանքարին, Յոյզ հայրորդին իր դիցասուրբ շունչն է ձօնում գորշ քարին

Վար է բերում աստղերն երկնից հայ արծիւն՝ իր սխրանքով, Ամեն մի հայ մի արծիւ է ու առիւծ է՝ իր կեանքով:

Շատ մի քայծիր իմ Վանա Շով՝ Շիրագներդ դեռ կը գան, Լեզու կը տան շանթ հաւքերիդ ու շողատոյ՝ քո ձկան, Չուր է ոտխը երագում խոյս տալ հային վերելքից, Արար աշխարհն է տես յուզում հայի խօսքից ու երգից:

Չէ, չի գատի հայի ոգուց Անին՝ իր սուրբ վանքերով, Չուր է տիրել ոտխն անգութ, լոյսն իմ՝ իր սեւ ճանկերով, Անին ունի յոյս, հաւատ, յոյզը՝ իր հայագիր զանգերով, Ու զանգերն՝ իր պիտ դողանջն մեր համադիր ջանքերով:

Դեռ պիտ Վանն՝ իր Վանա Շովով ըմպեն լոյսն իմ Սեւանի, Ղարսն ու Մուշն ու Էրզրումը՝ գով առնչուն Երեսանին, Պիտ ազատի Արագածը՝ Արարատին իմ վսեմ, Որ լեռնածին Շիրագները՝ Արածանու հետ խօսեն:

Տե՛ս դիցասիրտ Մայր Արաքսն էլ հայ ազգի երգն է հիւսել, Ձի շատ արիւն է անդ հոսել, ու խռով սիրտն իր յուզել, Յուզել է նա բիրտ դատերից, խիստ ցատերից, խոր վշտից, Եւ չի գատել տրտում երգն՝ իր պանդուխտ հայրորդու շրթից:

Ո՞վ է ասում Շիրագից ետ էլ Մասիս յուշող չկայ, Կոյր աշխարհն է մութ, երագում, թէ՞ արեւին շող չկայ, Արագը կայ, Մասիսը կայ, Ղարսն էլ մոռացող չկայ, Միփան սարն էլ ետ պիտի գայ, արեւի դէմ քող չկայ:

## ԽԱՂԱՂԱՍԵՐ ՄՈՆԳՈՍԸ

Ջեմա Թորթոր  
Թրգ. Համո Յարութիւնեան

Օրերից մի օր Իժերի երկրում, ակնոցաւոր օձի, և ընդհանրապէս որևէ արարածի հետ կուել չցանկացող ,մի մոնգոս\* ծնեց: Աշխարհով մէկ մոնգոսից մոնգոս լուր տարածեց, թէ ակնոցաւոր օձի հետ կուել չցանկացող մի մոնգոս է գտնել: Առհասարակ, այլ արարածների հետ չկուելը, այնքան էլ կարևոր չէ, սակայն ակնոցաւոր օձի հետ պայքարելը, այդ ճանապարհին սպանելը կամ զոհուելը, ամեն մի մոնգոսի պարտականութիւնն է:

- Ինչո՞ւ,- հարցրեց խաղաղասէր մոնգոսը, և աշխարհով մէկ լուր տարածեց, թէ նորելուկ արտասովոր մոնգոսը ոչ միայն ակնոցաւոր օձի կողմնակից և մոնգոսների դէմ է, այլ գիտնական հետաքրքրութիւն է ցուցաբերում և հակառակ է բոլոր մոնգոսային նպատակներին ու սովորութիւններին:

- Խե՛նթ է,- բղաւում էր երիտասարդ մոնգոսի հայրը:

Բայիկը հիւանդ է,- ասում էր մայրը:

Անհամարձակ և վախկոտ է,- գոռում էին եղբայրները:

Սեռական թերութիւն ունի,- շշուշում էին քոյրերը:

Խաղաղասէր մոնգոսին երբեք չհանդիպած անծանօթները « յիշում » էին, որ նրան « տեսել » են սողալու կամ օձերի պէս գալարապտոյտ փորձ անելու պահին և կամ մոնգոսաց երկիրը կործանելու նպատակով, դաւադրութիւն կազմակերպելու:

- Ես ճգնում եմ ամէն ինչ իմաստութեան ու պատճառները գտնելու ակնոցով դիտել,- ասում էր նորել արտասովոր մոնգոսը:- Պատճառաբանութիւնը համարժէք է վաւաճանութեան,- առարկեց հարևաններից մէկը,- և իմաստասիրութիւնը միայն թշնամին է օգտագործում,- շարունակեց միւսը:

Ի վերջոյ, տարածեց, թէ մոնգոսի ժանիքները, ինչպէս կորբայինը, թոյն են պարունակում: Նրան դատարանի յանձնեցին, դատապարտեցին ու աքտրեցին:

Բարոյական եզրակացութիւն

Հնարաւոր է թշնամու սպառնալիքից ապահով մնալ, սակայն ինչ ազգութիւն ու խմբին էլ պատկանելիս լինեք, իրայինների հալածանքից փրկութիւն չկայ:

\* Հնդկաստանում ապրող կաթնասուն, գիշատիչ փոքր գազան, թունաւոր օձերին որսալու կարողութեամբ:

# Ի »նձ՞ՅԿ ԷձՆՅՆՅՆՅՆ

*հեղինակ՝  
Կ.Գ.Պաուստովսկի  
թարգմանեց՝  
Անդրանիկ Խչյումեանը*

1786 թա-  
կանի ճնշան  
գիշերներից  
մեկն էր. Վիեն-  
նայի մտա-  
կայ  
արարձա-  
նում՝ մի փոք-  
րիկ տնակում՝  
մահուան շեմին



էր գտնուում մի կոյր ծերունի: Նա կոմս Թուրքի խո-հարարն էր եղել եւ, արդէն քանի տարի էր, ինչ օջախի թէժ կրակի պատճառով կորցրել էր իր տես-դուքինը:

Խոհարարը մի աղջիկ ունէր՝ Մարիա անունով: Նրանք ապրում էին հասարակ եւ աղքատիկ խրճիթում, որի անկիւնում մի հին դաշնամուր էր տեղադրուած:

Ծերուկն աղջկան խնդրեց, որ դուրս գնայ եւ առաջին անցորդին ներս կանչի, որպէսզի գայ ու ծերու-  
նու կեանքի վերջին վայրկեաններին, նրա հոգու հանգստութեան համար թողութիւն խնդրի:

Մարիան, վերնագգեստը ուտերին զցելով՝ վազելվազ դուրս է գնում: Դըր-  
սում անցորդ չկար: Մարիան երկար սպասեց: Վերջապէս մէկը երեւաց: Մարիան իրեն շտապ հասցրեց ան-  
ծանօթին եւ նրա ձեռքերը բռնեց:

-Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,- հարցրեց անծանօթը:

Ծերունու խնդրանքը աղջկը իր դողողչուն ձայնով փոխանցեց:

-Թէկուզ քահանայ եւ հոգե-  
որական չեմ, բայց ի՞նչ կայ, գնանք:

Մտնում են խրճիթ՝ անծանօթը, բաճկոնը շտապ հանելով, մտտում է հոգեվարքի մէջ գտնուող ծերունու կողքին:

-Խօսի՛ր, զուցէ կարողանամ կը-  
եանքիդ վերջին վայրկեաններում մխիթարեմ քեզ:

-Քանի դեռ չէի կուրացել, մի ողջ կեանք աշխատել եմ, որեւէ անվայել քայլի չեմ դիմել, և այնքան ժամա-  
նակ , մինչեւ որ կինս թոքախտով հիւանդացաւ: Նրան բուժելու համար փող չունէի, ստիպուած եղաւ կոմսին պատկանող մի փոքրիկ ոսկէ պնակ գողանալ: Այդ սխալ քայլը մտա-  
բերելիս շատ եմ տանջուում: Յատ-  
կապէս, որ միշտ այս հանգամանքը թաքցրել եմ իմ աղջկանից, քանզի նրան միշտ սովորեցրել եմ, որ ուրիշի ունեցւածքին աչք չդնի:

Անծանօթը հարցրեց.  
-Քո այս սխալ արարքի պատճառ-  
ով որեւէ մէկը պատժել՞ է:

-Ոչ,- ասաց ծերունին,- եթէ իմա-  
նայի, որ այդ ոսկին չէր օգնի իմ Մարթայի առողջութեանը, երբեք չէի վերցնի:

-Անունդ ի՞նչ է,- հարցրեց անծա-  
նօթը:

-Իզան Սիեր:  
Անծանօթը ձեռքերով փակեց ծե-  
րունու աչքերը եւ ասաց.

-Շատ լաւ, Իզան Սիեր, դու ան-  
մեղ ես, քանի որ քո այդ սխալ արար-  
քը եղել է յանուն այն սիրոյ, որը դու քո կնոջ հանդէպ տածել ես : Հիմա ասա, Ո՞րն է քո վերջին ցանկու-  
թիւնը:

-Կը ցանկանայի մէկ բան, որ որ-  
եւէ մէկն աղջկաս խնամակալութիւնը յանձն առնէր:

-Ես դա խոստանում եմ,իսկ այլ ցանկութիւն չունէ՞ք:

Հոգեվարքի մէջ գտնուող ծերունին դառը ժպիտը դէմքին՝ ասում է.

-Այո, կը ցանկանայի մէկ անգամ եւ տեսնել կնոջս՝ Մարթայի երիտա-  
սարդ դէմքը, կը ցանկանայի մէկ ան-  
գամ էլ արեւը եւ այս հինաւորց այգին տեսնել՝ գարնան շեմին՝ բող-  
բոջած ու կոկոններով լի: Բայց դա անհնար է:

-Շատ լաւ,- ասաց անծանօթը եւ արագ վեր կացաւ, քայլելով դէպի դաշնամուրը: Ապա ծերունուն ասաց.  
-Լսի՛ր, լսի՛ր եւ ուշադիր նայի՛ր:

Անծանօթը սկսեց մագնել. ասես զարուն եկաւ, եւ այգին, պատուհան-  
ներից այն կողմ, ծաղկեց: Ծերունին լուռ լուռ էր նստած: Յանկարծ նա անկողնում կիսականգնած աղաղա-  
կեց.

-Տեսնո՞ւմ եմ, Մարթային տես-  
նո՞ւմ եմ:

Անծանօթը շարունակում էր նս-  
գել:

Ծերունին աղերսանքով աղջկան ասաց.

-Մարիա՛, դռները բաց արա:  
Մարիան բացեց պատուհանի փեղկերը: Սառը օդը ներխուժեց է սենեակ:


Ծերունին ընկաւ բարձի վրայ եւ ազահօրէն խոր շունչ քաշեց:

Անծանօթը մօտեցաւ ծերունու անկողնուն: Ծերունին դժարութեամբ եւ իր վերջին շունչը փչելով ասաց.

-Ամէն ինչ տեսայ՝ իրական եւ պարզ: Պարզ, ինչպէս կեանքիս անց-  
եալ երկար տարիները: Բայց նախ-  
քան մեռնելս ուզում եմ ձեր անունն իմանալ:

-Ես Վոլֆգանգ Ամադէոս Մոցար-  
տըն եմ:

Մարիան ծերունու անկողնու կող-  
քից վերկացաւ եւ մեծ երաժշտա-  
գետի առջեւ ծնկի գալով՝ զլուխը խո-  
նարեց:



Մարում տեսայ մի թուփ ծաղկած, Անուշ բոյր էր տարածում, Նրա հոտով, անուշ բոյրով, Անցորդներն էին հիանում:

Ես մօտեցայ ծաղկած թփին՝ Շատ գեղեցիկ գոյներով, Բայց արմատը փշով պատուած, Դնչւած օտար թփերով:

Մեղրածանճն իր բզզոցով Ծաղկից նեկտար էր հաւաքում, Թիթեռնիկն էլ հիացմունքով Վեր ու վար էր թռչկոտում:

Բայց, դեռ չանցած երեք ամիս Այդ ծաղիկը բառամեց, Եւ գոյնզգոյն թերթիկները Քանու հոսանքը թափեց:

**Շայկ Գալստեան  
մայիսի 26.1999թ.**



ձօժ՝ Բժ՝ Օժ՝  
ձիժ՝ Ծժ՝  
Սիժ՝

Գրեց՝  
Լորան Նիրզարյ

Մի քանի րոպե քայլելուց յետոյ, արդէ՞ օր ձեր ոտքերը սկսում են ցաւել կամ դրանց մէջ՝ թմրածութիւն, ծակծկոց եւ սառնութիւն է առաջանում: Եթէ դրական է պատասխանը, դա նշանակում է, որ երակների հիւանդութեան հետեւանքով ձեր արեան շրջանառութիւնը խախտուել է, կամ գիտակամօրէն ասած՝ Peripheral Arterial Disease (PAD)\*, այսինքն ձեր ոտքի շրջապատային երակները բարակել են, կամ խցանել, ինչը արգելք է հանդիսացել արեան ազատ շրջանառութեան եւ եթէ չդիմէք բուժման միջոցների, ապա երբեմն ոտքի մի մասում կամ ոտնաթափում փքաղոտ է (մեկրոզ-գանգրենա-Gangrene) առաջանում, որի հետեւանքը՝ անդամահատութիւնն է:

Դեռ անելին, եթէ խցանած լինեն զարկերակները, հաւանական է, որ խցանւեն նաեւ այն զարկերակները, որոնք գտնուում են ուղեղի եւ սրտի շրջանում, ինչը մեզ կը կանգնեցնի ուղեղի կամ սրտի կաթածի առջեւ:

Դժբախտաբար, այս հիւանդութեամբ տառապող ութ միլիոն ամերիկացիներից շատ քչերն են գիտակցում, որ ցատոլ ոտքը մտահոգութեան արժանի հարց է, եւ ենթակայ է բուժման: Շատերն ենթադրում են, թէ վատառողջ լինելու կամ ծերանալու բերումով են ցաւում ոտքերը, եւ նման ախտանշանների մասին չեն յայտնում բժշկին», ասում է PAD-ի մասնագէտ դոկտ. Ռոդրիկ Ռասթէն:

Սակայն կայ նաեւ այլ կարծիք, դա է այն, որ կարելի է վերահսկման ենթարկել PAD-ին: Ծխելը դադարեցնելը կարեւորագոյն քայլերից մէկն է, եւ որքան շուտ ախտորոշում

\* Ծայրամասային զարկերակների հիւանդութիւն:

կատարի, այնքան առաւել դիւրին կը իրականանայ հիւանդի բուժումը: Որպէս բուժման միջոց խորհուրդ է տրւում օրական 2-3 կմ. քայլել: Բժիշկն էլ հաւանական է, որ ապրիլին կամ արիւնը նոսրացնող այլ դեղամիջոցներ նշանակի:

ԷժձՍԱԷՒ ԷՍՍձձՍԱԷՒ  
Թ.Շ. Սոնոզ  
Լու Անջելես Թայմզ-ից

Սօտաւորապէս 37 միլիոն ամերիկացիներ տառապում են խրոնիկ (երկարատեւ, հնացած) սինուզիալ հիւանդութեամբ, որն մի յամառող վարակ է քթոսկրի թաղանթապատի եւ խոռոչների վրայ:

Այս հիւանդութեան ախտանշաններ են՝ հարբուխը, քթանցքների լայնացումը, հազը, գլխացաւը եւ հոտառութեան նւազումը կամ՝ կորուստը:

Կարծաւտն (սուր) սինուզիտը, որը մէկ-երկու շաբաթից անելի երկար չի տեւում, առաջանում է մանրէական վարակներից: Խրոնիկ տեսակի ընթացքը եւ սկզբնաղբիւրը դեռեւս մի գաղտնիք է: Մէյօ կլինիկի հետազոտութիւններից ձեռք բերած վերջին արդիւնքները մատնանշում են, որ այն կարող է լինել վարակազերծման համակարգի (իմուն համակարգ) մի հակազդեցութեան հետեւանք, որը առաջանում է լորձի մէջ յայտնուած մանրասնկերի ազդեցութեան ներքոյ:

ՀԷՂՁՍՍՕժ-Բ ԶձՁՁՁՁ  
ՊՕՍձձձձձձձձձ

Ծերութեան կամ մի շաբթ նման հիւանդութիւնների, ինչպէս օրինակ՝ Ալզայմեր (մոռացութեան) հետեւանքով կծկւում եւ իրենց կենսաբանութիւնն են կորցնում ուղեղի որոշ բջիջներ: Այժմ հետազոտութիւնների ընթացքում պարզել է, որ գեները բուժման միջոցով հնարաւոր է լինվին վերականգնել դրանք:

Դոկտ. Մարկ Տուժինսկին, Կալիֆորնիա համալսարանի (Մանդէյէ-գօ), Մարկի անան Կենսաբանական Ուսումնասիրութեան ինստիտուտի

(Լա-Չոլլա) եւ Սան Դիեգոյի Վետերանների Բժշկական Կենտրոնի հետազոտողները ենթարկեցին երիտասարդ եւ տարեց կապիկների ուղեղի մասնայատուկ բճիճներ: Առաւել տարեց կենդանիների ուղեղների առաջամասում, (այն մասը որ ղեկավարում է ուղեղային որոշ ֆունկցիաներ, օր՝ յիշողութիւն եւ մտային կենտրոնացում) բճիճների 43%-ը դադարել էին, ուղեղի աշխատունակութեան համար անհրաժեշտ հիւլէները կծկւել էին: Հետազոտողները ջղերի աճեցնելու ազդակ հանդիսացող գեներ ներարկեցին կապիկներից չորսի ուղեղների մէջ: Մրա համաձայն, ըստ դոկտ. Տուժինսկու, հնարաւոր է եղել կանխել բճիճների քայքայման ընթացքը: Նա այժմ դիմել է ԱՄՆ-ի Պարենային եւ Դերորայքի վարչութեանը (FDA) մարդկանց վրայ փորձեր կատարելու հաւանութիւն ստանալու նպատակով:

ՎՔԻՍՕՁԱ ԻՉՉԷՁՍՕՁԱ  
ՆՁՁՁ  
Գրեց՝  
Ն. Օլիվիերա  
Տաֆտս Կամալսարանից

Կենսանիւթեր, մաշկի քսուկներ, քաշը նւազեցնող դեղորայք ակնկալում էք գտնել դեղատներում: Սակայն արդեօ՞ք հնարաւոր է դա գտնել բժշկի կաբինետում:

Նախ միանգամայն իրաւացի պիտի համարենք ԱՄՆ-ի բժշկական միութեան հրատարակած այն ուղեգիրը, որով յանձնարարւում է բժիշկներին, շահաղիտական նպատակով առողջապահական արտադրանքները չվաճառել: Բժիշկ, որը առիթ է ունենում շահոյք ստանալ հիւանդին վաճառած դեղամիջոցներից ապա առաջանում է շահերի բախում, դա կարող է իսկ ազդել վերոյիշեալ բժշկական ուղեգրին: Դա հնարաւոր է միայն այն դէպքում, երբ հիւանդը դեղամիջոց գտնելու համար դժարութեան է հանդիպում: Նման պարագայում բժիշկը պարտաւոր է տալ դեղամիջոցը անհատոյց, կամ վաճառել սահմանած գներով:

Թարգմանեց  
Լեւոն Ահարոնեանը



# ԱՐՑԱԶՐՈՅՑ ՄԱՐԶԻՉ՝ ՏԻԿ. Էմմա Ֆալլահեանի հետ

*Լոյս.- Նախ թոյլ տուք «Լոյս» երկշաբաթաթերթի անունից շնորհակալութիւն յայտնել՝ Ձեր ժամանակը մեզ տրամադրելու համար:*



**Հ.- Կը խնդրէի ներկայացնէիք ձեր համառօտ կենսագրութիւնը:**

Պ.- Ծնել եմ 1960 թ.-ին, սովորել եմ Թունեան, Թովմասեան եւ Սողոմոնեան դպրոցներում:

**Հ.- Ե՞րբ էք սկսել Ձեր մարզիչի կարիերան ու այժմ որտե՞ղ էք աշխատում:**

Պ.- 1980 թ.-ից ստանձնել եմ մարզիչի ծանր աշխատանքը, միեւնոյն ժամանակ աշխատել եմ Թունեան, Թովմասեան եւ Արարատ դպրոցներում՝ որպէս մարզանքի ուսուցիչ: Աշխատել եմ նաեւ 8-րդ շրջանի կրթա-դաստիարակչական «Շահիդ Ռաջայի» մարզահամալիրում եւ որպէս իրավարար մասնակցել եմ տարբեր ազգային եւ պետական մրցոյթներին:

**Հ.- Ինչպէ՞ս էք զնահատում հայ աշակերտուհիներին մարզանքի ասպարէզում:**

Պ.- Եթէ հայոց միութիւններում լինեն մարզական կանոնաւոր փորձեր՝ արդիւնքները լաւ կը լինեն, բայց քանի որ մենք բաւարարում ենք միայն դպրոցներում եղած ընդհանուր մարզանքի դասընթացներով,

ապա որեւէ մէկ ասպարէզում մարզիկ պատրաստելը հնարաւոր չէ:

**Հ.- Մարզական կեանքում ի՞նչ դեր է կարող խաղալ մամուլը :**

Պ.- Այն պէտք է լուսաբանի առաջաւոր մարզիկների բոլոր յաջողութիւնները, հարցազրոյցներ կազմակերպի նրանց հետ, եւ այս ամէնը քաջալերանք կը լինի միւսների համար:

**Հ.- Նշէք խնդրեմ Ձեր կողմից մարզած յայտնի աշակերտներից մի քանիսի անունները:**

Պ.- Անաշէ Բիզարեան, Անգինէ Մահմուդի, Միւնէ Բարախանլու, Արսինէ Բաղումեան, Այրիս Արթունեան, Լիլիա Յակոբեան, Ռամելլա Մահմուդի:

**Հ.- Ինչպիսի՞ն է հայկական դպրոցների մակարդակը մարզանքի բնագաւառում՝ Թեքրանի մասշտաբով:**

Պ.- Եթէ հայ աշակերտուհիները աւելի լուրջ մասնակցեն մարզանքի փորձերին, ապա աւելի մեծ նաճումներ կունենային:

**Հ.- Ի՞նչ խորհուրդներ կը տայիք ծնողներին:**

Պ.- Խորհուրդ կը տայի, որպէսզի նրանք երեխաներին ծանօթացնէին հայ հանրայայտ մարզիկներին, եւ բացի այդ մեծացնէին նրանց լուրջ



հայեցի դաստիարակութեամբ:

**Հ.- Վերջում՝ Ձեր պատգամը:**

Պ.- Իմ պատգամը ուղղում է ծնողներին, որպէսզի նրանք իրենց երեխաներին օգնէին նաեւ , այլ բնագաւառներում, յատկապէս մտաւոր կարողութիւնների ձեռքբերման մէջ:

**«Թղթակից»  
Ռոբերտ Վարդումեան**

## Ֆիզիկական պատրաստութեան եւ առողջութեան նպատակով՝ կանոնաւոր մարզական վարժութիւններ


*Անգլերէնից թարգմանեց՝  
Վազգէն Մինասեանը*

Յարմար մարզական վարժութիւնների սովորութիւն դարձնելու, անշուշտ, կարեւոր գործօն է համարում ամբողջ աշխարհի եւ, յատկապէս, արեւմտեան երկրներում բնակող մարդկանց մօտ՝ սրտանօթային եւ այլ հիւանդութիւնները նւագեցնելու առումով: Ընդհանուր մահացութիւնների աւելի քան 50% սրտային հիւանդութիւնների հետեւանք է:

Միւս կարեւոր խնդիրը գիրութիւնն է (յաւելեալ ճարպը): Սրտանօթային հիւանդութիւնների պէս, տարիքն առած մարդկանց աւելի քան 50%՝ գէր են: Ուսումնասիրութեմբ պարզել է, որ սրտանօթայինները՝ հաշարկային եւ Ֆիզիոլոգիական առումներով գիրութեան հետ են կապած: Սրտանօթային հիւանդութիւնների առումով՝ գէր անհատը մահացութեան է մատնւած 2.5 անգամ աւել քան՝ միջակ կամ թեթեւ կշիռ եւ օրգանական բաղադրութիւններ ունեցող անհատը: Ելնելով այն քանից, որ գիրութեան հիմնական պատճառը Ֆիզիքական ակտիւութեան բացակայութիւնն է, անհրաժեշտ է եւ երկարատեւ մարզական վարժութիւններ կատարել՝ գիրութեան դժարութիւններն ու սրտանօթային հիւանդութիւնները նկատելիօրէն նւագեցնելու համար իհարկէ, աւելի նպատակայարմար է, որ սրտանօթային համակարգի առողջութեան եւ մարմնի յարմար կազմւածքի բարելաւման ու պահպանման ուղղութեամբ նկատի առնւած ծրագրերը՝ մարզական Ֆիզիոլոգի եւ Ֆիզդաստիարակչութեան մասնագէտների հսկողութեամբ կատարեն (իրագործեն):

## Սրտանօթային հիւանդութիւններն սպառնացող պատճառներն ու ազդակները

Մարզական վարժութիւնների եւ առողջութեան հետ կապւած քիման սկսելու համար, անհրաժեշտ է ընդհանուր գաղափար կազմել սրտանօթային հիւանդութիւնների եւ որոշ սպառնացող պատճառների ու գործոնների վերաբերեալ: Սրտանօթային հիւանդութիւնների ամենատարածած տեսակները հետեւեալներն են.



- ա) Սրտի կաթւածը:
- բ) Ուղեղի կաթւածքը:
- գ) Բարձր ճնշման արեան հիւանդութիւնները:

Սրտի կաթւածի հիմնական պատճառը երակների խցանումն է (կարծրացումը), (ատերոսկլերոզ), որը աստիճանաբար զարգցող (առաջացող) հիւանդութիւն է ընդգրկում է քրոմեր զարկերակների տրամագծի նեղացումը: Չարկերակի այդ նեղացումը, նրա ներքին պատերում ճարպային նիւթերի, կալցիումի եւ այլ բջջային յաւելումների մատուածքից է առաջանում: Չարկերակի անցքի նեղացումը աստիճանական է եւ աւելի զարգացած փուլում զարկերակի արեան շրջանառութիւնը կարող է բոլորովին կասեցիլ: Երբ այսպիսի մի դէպք պատահի, սրտմկանի այն մասը, որի արիւնն է ապահովում այս զարկերակը, մահանում է. այս պարագայում ասում են, թէ սրտի կաթւած է տեղի ունեցել: Կանոնաւոր եւ երկարատեւ մարզական վարժութիւնները կարելի է գործօն են հանդիսանում սրտի կաթւածի ուժգնութեան մագնցման հարցում, ուստի սրտի կաթւածի վտանգաւոր եւ սպառնացող որոշակի գործոններից մէկը Ֆիզիքական վարժութիւններ չկատարելն է. եւ պասիւ կեանքը (լայն բացատրութիւն է տրելու սրտանօթային հիւանդութիւնները ըստ սպառնացող գործոնները մագնցելու, ինչպէս նաեւ Ֆիզիքական պատրաստուածութեան եւ մարմնի յարմար կազմաւածքի ձեռքբերման մպատակով Ֆիզիքական կանոնաւոր վարժութիւնների կատարման եւ դեղատոնս պատրաստելու ձեւերի կա-

պակցութեամբ): Ճանաչած այլ կարելի է գործօններից են՝ տարիքը, ժառանգականութիւնը, գիրութիւնը, ծխախոտի օգտագործումը, կերակրի խոլեստերին կամ ճարպի բարձր տոկոսը, արեան ճնշումը, սեռը եւ հոգեկան ճնշումները: Այն գործօնները, որովայնի Ֆիզիքական կանոնաւոր աշխատանքը կարող է սրտի քրոմերի հիւանդութիւնները ի յայտ գալու հասանակաւորեան, եւ կամ դրանց ուժգնութեան մագնցմանը յանգեցնեն դրանք, հետեւանքներն են.

1. Սրտի կողմնակի անօթային դառնալը:
2. Երակների չափերը:
3. Արեան մակարդման կարողութիւնը:
4. Վերջոյթային արեան բաշխման: Եւ վերադարձի արդիւնատութիւնը:
5. Սրտմկանի գործունեութիւնը (էֆէկտիւթիւն):
6. Արեան ծաւալն ու կարմիր գնդիկների զանգւածը:
7. Վահանաձեւի գործունեութիւնը:
8. Աճի հորմոնի արտադրութիւնը:
9. Հոգեկան ճնշումների դիւնդրները:
10. Պահպանողական կեանքի սովորութիւններն, ու կեանքից ստացած հաճոյքը:

- բ) Նւազում
1. Արեան խոլեստերինի ու տրիգլիցերինի մակարդակը
  2. Գլուկոզայի առկայութեան դիւնդրումը:
  3. Գիրութիւնը:
  4. Արեան քիթեղիկների հաստութիւնը:
  5. Չարկերակային արեան ճնշումը:
  6. Սրտի բարախումը:
  7. Սրտի գործունեութեան անկանոնութեան նկատմամբ խոցելիութիւնը:
  8. Ներարդային եւ հորմոնային չափից աւելի հակազդեցութիւնը:
  9. Անհանգստութիւն՝ հոգեկան ճնշման հետ միաժամանակ:
- Հաշի առնելով առկայ փաստաթղթերն ու վկայութիւնները, բազ-

մաքի հիւանդութիւնների, եւ յատկապէս դրանցից կարելի է պարզել՝ սրտանօթային հիւանդութիւնների, տարածման մագնցման հարցում մարզական կանոնաւոր վարժութիւնների ազդեցութիւններն, անշուշտ, պարզ է դառնում բոլորին: Մարմնա-մարզութիւնը անհատի հոգեկան եւ գործնական տարողութիւնները բարձրացնելով՝ միաժամանակ կանխում են եւ Ֆիզիքական եւ հոգեկան տար-բեր հիւանդութիւնները, եւ՝ ներկայ դարի մեքենայացած հասարակութեան մշակութային ու հասարակական բազում շեղումներն, գայթակորութիւնները:

Հիւանդութիւնների կանխարգելումը, անշուշտ, սակաւաժայտ է, ճշգրիտ եւ զերծ է բուժման ցաւերից ու անհանգստութիւններից, եւ Ֆիզիքական աշխատանքներ կատարելով՝ տարբեր հիւանդութիւնների կանխումը, համարում է կարելի է պարտաւորապէս եւ լաւագոյն եղանակներից մէկը: Նկատի ունենալով տարբեր հասարակութիւններում տիրող տնտեսական ճրգմաժամն (ինչիւնացիմա) ու հասարակութեան բոլոր խաւերի ոչ հասարակ ձեւերի հիւանդանոցային, դեղամիջոցները եւ բժշկական հնարաւորութիւնները, ուշագրաւ է այն հարցը, որ մարզական վարժութիւնների օգտակարութեան հարցում մարդկանց կատարեալ գիտակցութիւնը կարող է աշխատանքի եւ առօրեայ գործունեութեան համար առողջութիւնն ու Ֆիզիքական համապատասխան պատրաստուածութիւնն ապահովել՝ միաժամանակ ընտանիքների ու պետութեան մեծ գումար կազմող ծախսերը թեթեւացնել:

Ուստի, նախքան մարզական մի կատարեալ ծրագրի ներկայացումը, հարկ է անդրադառնալ կանոնաւոր վարժութիւններին՝ հասարակութեան որոշ անհատների անմասնակից դառնալու հաւանական պատճառներին, ինչպէս նաեւ, որոշ անհատների կողմից մարզական վարժութիւնների կատարման պատճառների վերաբերեալ մի շարք ճշմարտութիւններին:

*Անգլերէնից թարգմանեց՝  
Վազգէն Մինասեանը*



# ՅուՆիս

**Համադրեց՝  
Սուսաննա Համբարձումեանը**

Գրաբարում գրում և նախապես էլ արտասանում էր յունիս: Այս յ-ի գրութեան ու արտասանութեան հաշ-  
ւառումը, ի միջի այլոց, կարևոր է ոչ միայն յունիսի, այլ  
նաեւ յունարի (յունար) եւ յովիսի (յովիս) ստուգա-  
բանութիւնը ճիշտ հասկանալու համար:

Յունիս անսանունը կապում է լատիներէն Junius  
ածականի հետ, ինչը նշանակում է «Իւնոնայի»: Հռո-  
մէացիներն իրենց 6-րդ ամսին ասում էին Junius mensis,  
կամ կարճ՝ Junius: Անգլերէն June, Ֆրանսերէն juin, գեր-  
մաներէն Juni:

Բայց ով՞ է այդ Իւնոնան:

Նախ ասեմ, որ Իւնոնա ձևը բուն լատիներէն չէ, այլ  
երոսպական լեզուներում է ստեղծել յետնաբար: Հռո-  
մէական աստածուհին կոչել է juno. սրա սեռականի  
(junonis) ձևի հիմքից էլ կազմել է Իւնոնա անունը: Նա  
խոշոր դէմք էր հռոմէական դիցաբանութեան ու ա-  
ռասպելաբանութեան մէջ: Իւնոնան եղել է ամուսնու-  
թիւնները պահպանող և ծննդատները հովանաւորող՝  
աստածուհի:

Հայոց հին տոմարով 6-րդ ամիսը կոչում էր արաց:  
Յաւօք, մեր ստուգաբանական բառարանները այս ան-  
ւան ծագման մասին որևէ գիտական բացատրութիւններ  
չեն տալիս:

## Ասածածքներ

- Քաղցր խօսքը երկաթէ դռներն էլ է միմեանց:
- Արշինն էլ է ձեռքիդ, կտան էլ, ինչպէս կուգես, կչա-  
փես:




## Հումոր

- Երկու ծանօթ հանդիպում են իրար:
  - Ինչո՞վ ես գրադած,- հարցնում է մէկը:
  - Հիշողութիւններ են գրում:
  - Վատ գործ չէ: Բայց ինձ մի բան է հետաքրքրում,  
արդյօք դու հասել ես այնտեղ, որ քեզ հարիւր դուրս  
պարտք տուցի, և դու մինչև օրս չես վերադարձրել:
- Դպրոցական որդին դիմում է մօրը.
  - Չեմ հասկանում, իմ ինչի՞ն է պէտք անգլերէն լեզուն:
  - Չէ՞ որ աշխարհի կէտը անգլերէն է խօսում:
  - Մի՞թէ դա քիչ է:

## Սկապում են Հայաստանի դերասանները

Պրն. Արթուր.- Երբ մի առիթով իմացայ, որ իրանական  
սովորութեան համաձայն՝ գործ անողին ասում են՝ ձեռքդ  
չցաւայ, ես էլ մի ուրիշ առիթով ուզեցի նմանել  
իրանահայերին և, յարգելով ուտողին, ասացի՝ փորդ  
չցաւայ, բայց դա ծիծաղ առաջացրեց:

Օր. Էլյա.- Իրանահայերից մէկին հարց տուցի, նա գլխի  
շարժումով պատասխանեց, բայց ես չհասկացա այդ  
ասաց, ք՞է ոչ: Յետոյ պարզ դարձաւ, որ Հայաստանում ոչ  
ասելու համար գլուխը աջ ու ձախ են տանում, իսկ  
իրանում բարձրացնում են վերև և ուղղում:



Հոսակ խօսքի



## Հանելուկ

Կանգնած քնեց  
Ամբողջ ձմեռ,  
Մէկ ոտք ունի  
Ու բազում ձեռք:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### ՅՈՒՇԵՐԵԿՈՅ

Նւիրած իրանահայ ազգային և հասա-  
րակական գործիչ, «Փիւնիկ» շաբաթաթերթի  
գլխաւոր խմբագրին, Ի.Ա.Ս.Ս նախկին անդամ

ԾԾՁ â ԹՁ Êô° ð, ° Չ ÛÆÛ

Այն տեղի կունենայ 2000 թւականի Յունիսի 29-  
ին (9 թիր) ժամը 20.30 -ին Ի.Ա.Ս.Ս կենտրո-  
նատեղիում:

Մուտքը ազատ է:

**ԻԱՍՍ Վարչութիւն**

## Երիտասարդի համար

### Գիտութիւնը զոհաբերութիւններ է պահանջում

#### «Առաջադէմ թռան գանգատը յետադիմական տատից»

Ռ. Ա. Ղազարեան

Շատ դժար է գիտական հետազոտութիւններով զբաղել, եթէ տատին հետամնաց է և անգիտակից:

-Գիտեմ ես քո փորձերի խելքը,-ասում է նա,-փորձեր չեն, փորձանք են մեր գլխին՝ ամէն անգամ մի բան փչացնում ես: Դատարկ բաներով զբաղելու փոխարէն, լաւ կանէիր հաւերին ջուր տալիք ու գնալիք հացի:

Չարմանալի է թէ որչափ անարդար կարող են լինել մեծերը. երեկ էլ ես գնացի հացի, այսօր էլ գնամ... կարծես չըզհիտի, որ այսօր Վազգէնիկի հերթն է: Բայց, փորձիր, հիշեցրու այդ մասին, անմիջապէս կասի, որ ես մեծ տղայ եմ ու չեմ ամաչում, հաշիւ եմ պահում: Լաւ, ես ի՞նչ անեմ, որ Վազգէնիկը երեք տարի չորս ամիս ու տասներկու օրով ինձնից փոքր է, ուրեմն ամբողջ կեանքումս պիտի տանջուեմ... երեք տարի առաջ էլ էին ասում, որ ես մեծ եմ, իսկ նա՝ փոքր: Կռելիս փոքր չէ: Գիտի որ ամէն անգամ ինձ են պատժելու. «մեծ տղայ ես, չե՞ս ամաչում»...:

Պարզապէս եկել եմ այն եզրակացութեան, որ տատին քար է դնում գիտութեան անիւի տակ: Մայրիկն էլ է ասում, որ գիտութիւնը մի ժամանակ հալածել է և նրա անիւների տակ հետամնաց մարդիկ քար են դրել: Իսկ օրացոյցում կարդացի, թէ ինչպէս են ինկվիզիտորները խարոյկի վրայ այրել Չորդանո Բրունոյին, միայն այն բանի համար, որ նա ասել է, երկիրը պտոյտ է գալիս Արեգակի շուրջը: Ի միջի այլոց, տատին էլ բարկացաւ, երբ ես ասացի, որ երկիրը պտտւում է: «Եղ քո դատարկ գլուխն է պտտում», -ասաց նա: Ես այլևս չկարողացայ ինձ զգալի և գոռացի, որ ինքն էլ է ինկվիզիտոր, իսկ նա վզակոթիս հասցրեց.

-Մեր ժամանակ քո չափ տղաները աշխատում էին, տուն էին պահում իսկ դու՝ վնաս ա, որ հասցնում ես:

Դրանից յետոյ նա սկսում էր թել իմ փչացրած իրերը. սեղանի սփռոցն եմ ծակել կէկարական գողիչով՝ մէկ, տատին ծալում է մի մատը, մահճակալի ծածկոցն եմ փտեցրել, վրան ինչ-որ զգելի յեղուկ թափելով՝ երկու...: Բա ես մեղաւոր եմ, որ լաբորատորիա չունեմ և ստիպւած սեղանի վրայ եմ հաւաքել իմ երեք լամպանի «սնող լամպը ներառեալ» ռադիոընդունիչը: Ասեմք ծակն էլ պատիկ է, և եթէ սեղանի այդ տեղը կտիճ քսես ու սփռոց տեղից չչարժես, ոչ մի բան չի երեսայ: Իսկ մահճակալի ծածկոցի վրայ յայտածիչ էր թափել, երբ ես Ֆոտոժապատեմն էի մշակում մահճակալի տակ, քանի որ այնտեղ մութ է: Թափում տեղում ծածկոցը սկզբից դեղնեց, յետոյ փտեց: Մայրիկը այդ տեղի վրայ բարձն է դնում և ոչինչ չի երևում: Բայց տատը ոչ մի կերպ չի հաշում ու ամէն անգամ երեսով է տալիս: Մի ամգամ ես չդիմացայ և ասացի, որ գիտութիւնը զոհաբերութիւններ է պահանջում: Մայրիկըն ժպտաց, իսկ տատն ասաց, որ ես կարող եմ գլուխ պատովը տալ, երբ ինքս կաշխատեմ: Դէ, արի ու խօսք հասկացրու:

Սակայն, տատին թող յոյս չունենայ, որ ես կընդհատեմ իմ փորձերը. մայրիկը ասում է, որ զոհաբերութիւնից բացի գիտութիւնը պահանջում է նաև համառութիւն ու հետևողականութիւն: Եւ, ճիշտն ասած, շատ հետաքրքիր է Ֆիզիկայով զբաղել: Օրինակ, մի անգամ «Հետաքրքրաշարժ Ֆիզիկայում» ես կարդացի, որ օդը կշիռ ունի, և որ ամէն մարդ իր ուսերի վրայ... քսան հազար կիլոգրամ ծանրութիւն է կրում, որը կոչւում է մթնոլորտային ճնշում: Այ

քեզ բան... ես չէի էլ պատկերացնում, որ այդքան ուժեղ եմ ու դիմանում եմ այդ ծանրութեանը: Ասեմք, իմ ուսերի վրայ մի քիչ պակաս կը ճնշի, երևի մի տասը հազար կիլոգրամ: Դա էլ քիչ չի՝ տասը տաննա... հինգ եմ հասկանում, թէ ինչու հացի գնալիս այդպէս շուտ եմ հոգնում: Երբ Վազգէնիկին ասացի, չիաւատաց, կարծեց ձեռ եմ առնում: Դէ նա, ասեմք, կիսազրագէտ է, միայն այբուբենի կէսը գիտի: «Հետաքրքրաշարժ Ֆիզիկայում» նաեւ գրած էր, թէ ինչպէս կարելի է ապացուցել այդ ճնշման գոյութիւնը: Պարզեց, որ դա դժար չէ. պէտք է վերցնել նալի բիդոն, մի քիչ ջուր լցնել մէջը և դնել կրակին: Երբ ջուրը եռայ և սկսի ուժեղ գոլորշի արձակել, պէտք է բիդոնի բերանը ամուր խցանել ու անմիջապէս սառը ջուր անել վրան: Ջրի սառնութիւնից բիդոնի ներսի գոլորշին իսկոյն կիստանայ ու նորից ջուր կդառնայ և, քանի որ բիդոնի ներսը օդ չի անցնում, ապա գոլորշուց ազատած տարածութիւնը լրի դատարկ կլինի: Այդ անօդ տարածութիւնը վակուում է կոչւում: Բայց ամենազարմանալին այն է, որ բիդոնի ներսում վակուում առաջանալուն պէս մթնոլորտային ճնշումը մարդու աչքի առաջ ճգնում է բիդոնը:

Ես հաստատ վճռեցի ապացուցել մթնոլորտային ճնշման գոյութիւնը: Սակայն որտեղից բիդոն ճարել: Տատին մի հատ նոր բիդոն ունի, բայց փորձիր խնդրել... չի տայ և դեռ կըբարկանայ... Չի ուզում հասկանալ, որ գիտութիւնը զոհաբերութիւններ է պահանջում: Նոյնիսկ Վազգէնիկը համաձայնեց, որ գիտութիւնը զոհաբերութիւններ է պահանջում, միայն թէ վախենում էր, որ տատին գլխի կընկնի, թէ ով է վերցրել բիդոնը: Բայց ո՞նց կարող էր տատին նկատել, երբ ինքը շուկայ էր գնացել, իսկ մայրիկն աշխատեցի տեղում էր: Կարծես չգիտեմ էլի, որ երբ տատին գնալիս հրամայում է, որ խելօք մնանք, հաւերին ջուր տանք և ուշադիր լինենք, որպէսզի գետինը մտած հարևանուհին մեր տակակաշից թթու չհանի, ուրեմն նա առնալով չորս ժամ կը բացակայի: Եւ յետոյ, ճիշտն ասած, չիաւատայ չէր գալիս, որ բիդոնը կարող է բոլորովին անպէտք դառնալ:

Տան ետեւը խարոյկ վառեցին և բիդոնի մէջ մի քիչ ջուր լցնելով դրեցինք կրակի վրայ: Երբ գոլորշին սկսեց ուժեղ դուրս գալ բիդոնի բերանից, ամուր խցանեցինք այն եզիպատացորենի մաքրած կողովով, և «մեկ, երկու, երեք» ասելով սառը ջուրը միաժամանակ շուտ տեցինք բիդոնի վրայ: Բիդոնը մի ակնթարբառում ճգնեց ու լաւաշի նման տափակեց:

Այ քեզ հրա՛շք:

Վազգէնիկը մի պահ ապուշ կտրեց, յետոյ շշմեց «Տատին, հաստատ մեզ կպաւանի»: Ես ասացի, որ լեզուն իրեն պահի ու այլանդակած բիդոնը հորեցի տան ետևը: Տատին սկզբում չնկատեց կորուստը, իսկ երբ, մի օր ուզեց օգտագործել, դես ու դեն ընկաւ, հարց ու փորձ արեց բոլոր հարեաններին և նոյն հերթականութեամբ անիծեց նրանց գողութեան համար:

Ամէն ինչ բարեյաջող կըվերջանար, եթէ Վազգէնիկը չդաւաճաներ: Մի անգամ ինձ բարկացրեց ու սենեակից դուրս վազելիս ճակատով զարնեց դռանը: Ես ասացի, որ տեղն է իրեն, որ մարդ պիտի իր սեփական գլուխը պահել իմանայ, իսկ նա ցալից ու գայլոյթից ճչաց.

-Ես իմ գլուխը կպահեմ, իսկ դու տատիկից բիդոնը չպահեցիր...

Պարզ է, տատիկը, որ խոհանարանում էր, լսեց ու իմ խօստաւանութիւնը լսելուց յետոյ մի ժամով ինձ անկիւն կանգնեցրեց: Ես էլ ասացի, որ սննդադու եմ յայտարարում՝ հրաժարում եմ ճաշից և միայն կիսերը կըխմեմ: Այն ժամանակ մայրիկը շոյեց գլուխս և՛ ասաց.

**Համբերիր «պրոֆեսոր», չէ՞ որ գիտութիւնը զոհաբերութիւններ է պահանջում:**